Ֆինանսական հաշվետվություններ և Անկախ աուդիտորական եզրակացություն

2024թ դեկտեմբերի 31-ի դրությամբ

«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն

Երևան – 2025

«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն»

փակ բաժնետիրական ընկերություն

Հայաստանի Հանրապետություն

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Բաժին	էջ
Խորհրդի կազմը	3
Անկախ աուդիտորական եզրակացություն	4
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	7
Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն	8
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին	9
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	10
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	11

«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի տնօրենների խորհուրդ

Արթուր Երիցյան	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության գլխավոր քարտուղար, խորհրդի նախագահ
Արամ Խաչատրյան	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության իրավաբանական վարչության պետ, խորհրդի անդամ
Արմեն Մելիք-Իսրայելյան	ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտեի պետական բաժնեմասի կառավարման վարչության պետ, խորհրդի անդամ
Ռստանիկ Մարուխյանը	Միջուկային անվտանգության վարժանքային տարածաշրջանային ուսումնական կենտրոնի ղեկավար, պրոֆեսոր, խորհրդի անդամ
Նատալյա Սարջանյանը	«Հայաստանի Էլեկտրական ցանցեր» ՓԲԸ կորպորատիվ և հասարակության հետ կապերի դեպարտամենտի պետ, խորհրդի անդամ
Ալիսա Բաղդասարյանը	«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի գլխավոր տնօրենի պ/կ, խորհրդի անդամ

ALFA AUDIT
CLARITY IN EVERY DETAIL

«ԱԼՖԱ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան 0038, Հալաբյան 5/6
Հեռ. (+374 10) 399 855, (+374 55) 560 550
www.alfaaudit.am , info@alfaaudit.am

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Երևանի ՋերմաԷլեկտրակենտրոն»
փակ բաժնետիրական ընկերության
բաժնետերերին

Վերապահումով կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Երևանի ՋերմաԷլեկտրակենտրոն» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ «Ընկերություն») ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2024թ., այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:
Մեր կարծիքով, բացառությամբ մեր եզրակացության «Վերապահումով կարծիքի հիմքեր» բաժնում նկարագրված հարցերի հնարավոր ազդեցության, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակը 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ):

Վերապահումով կարծիքի հիմքեր

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլված հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում է 104,401,196 հազար դրամ, իսկ 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 101,253,127 հազար դրամ: Ինչպես նկարագրված է ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 6.1-ում՝ Ընկերության հիմնական միջոցները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված են վերագնահատված արժեքով: Ընկերության հիմնական միջոցները վերջին անգամ վերագնահատվել են 2017թ. դեկտոմբերի 31-ի դրությամբ: Համաձայն ՀՀՄՍ 16. «Հիմնական միջոցներ» ստանդարտի վերագնահատումները պետք է կատարվեն բավարար պարբերականությամբ, որպեսզի հաշվեկշռային արժեքը էականորեն չտարբերվի հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ իրական արժեքից: Հաշվի առնելով վերոգրյալը մենք ի վիճակի չենք եղել որոշելու, թե արդյոք անհրաժեշտ կլինեին ճշգրտումներ հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքի և վերագնահատման պահուստի առնչությամբ՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ, և հաշվետու տարվա շահույթի առնչությամբ՝ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության մեջ:

Աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում:

Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների Էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՄԽ կանոնագիրք) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀՄԷՄԽ կանոնների: Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր վերապահումով կարծիքն արտահայտելու համար:

Այլ հանգամանք

Ընկերության 2023 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունները աուդիտի են ենթարկվել այլ աուդիտորի կողմից, ով այդ հաշվետվությունների վերաբերյալ 2024 թվականի ապրիլի 01-ին արտահայտել է վերապահումով կարծիք:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Ընկերությունը լուծարելու կամ Ընկերությյան գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են Ընկերությյան ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր

համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում.

- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար.
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը.
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը.
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Հաստատված է

«Ալֆա Աուդիտ» ՍՊԸ

Տնօրեն/ աուդիտոր Լ.Պողոսյան

«21» ապրիլի 2025թ.
Երևան

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն
առ 31-ը դեկտեմբերի 2024թ դրությամբ

	ԾՆԹ.	31.12.2024 հազ. դրամ	31.12.2023 հազ. դրամ
ԱԿՏԻՎՆԵՐ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	7	104,401,196	101,253,128
Ոչ նյութական ակտիվներ		1,071	2,689
Հետաձգված հարկային ակտիվներ	8	1,862,621	819,215
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		**106,264,888**	**102,075,032**
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	9	7,656,935	7,645,541
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	10	9,742,888	9,862,242
Բանկային ավանդներ	11	7,240,000	13,611,217
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	12	372,369	770,914
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		**25,012,192**	**31,889,914**
Ընդամենը ակտիվներ		**131,277,080**	**133,964,946**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ			
Սեփական կապիտալ	13		
Բաժնետիրական կապիտալ		34,921,018	12,629,795
Էմիսիոն եկամուտ		11,276,317	11,276,162
Վերագնահատման պահուստ		2,366,831	2,431,758
Չբաշխված շահույթ		14,513,171	13,799,517
Պահուստային կապիտալ		1,894,469	1,491,780
Ընդամենը սեփական կապիտալ		**64,971,807**	**41,629,012**
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր	14	59,406,820	67,979,631
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		**59,406,820**	**67,979,631**
Ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր	14	2,402,391	2,742,056
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	15	4,446,116	3,457,973
Կրեդիտորական պարտքեր շահութահարկի գծով		-	697,581
Կրեդիտորական պարտքեր շահաբաժինների գծով		-	17,400,693
Եկամուտներին վերաբերվող շնորհներ		49,947	58,000
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		**6,898,454**	**24,356,303**
Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ		**131,277,080**	**133,964,946**

11-ից 40-րդ էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են սույն Ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2025թ. ապրիլի 21-ին:

Ալիսա Բաղդասարյան Գլխավոր տնօրենի պ.կ.	Գարրի Ախոյան Հաշվապահական ծառայությունների ղեկավար	Հերմինե Մարտիրոսյան Փորձագետ հաշվապահ

Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն

«Երևանի ՋերմաԷլեկտրակենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն

2024թ.-ի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	ԾՆԹ.	2024 հազ. դրամ	2023 հազ. դրամ
Հասույթ	16	*92,954,619*	*90,270,134*
Ինքնարժեք	17	*(84,683,054)*	*(85,350,833)*
Համախառն շահույթ		**8,271,565**	**4,919,301**
Այլ եկամուտներ	18	*3,505,529*	*661,344*
Վարչական ծախսեր	19	*(868,097)*	*(756,571)*
Այլ ծախսեր	20	*(16,095,667)*	*(648,565)*
Գործառնական շահույթ		**(5,186,670)**	**4,175,509**
Ֆինանսական եկամուտներ	21	*875,606*	*1,450,599*
Ֆինանսական ծախսեր	21	*(1,490,100)*	*(1,622,083)*
Այլ ֆինանսական հոդվածներ	22	*6,661,584*	*1,962,328*
Շահույթ մինչև հարկումը		**860,420**	**5,966,353**
Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)	23	1,043,406	(794,019)
Տարվա շահույթ հարկումից հետո		**1,903,826**	**5,172,334**
Այլ համապարփակ ֆինանասական արդյունք		**-**	**-**
Տարվա ընդհանուր համապարփակ ֆինանսական արդյունք		**1,903,826**	**5,172,334**

11-ից 40-րդ էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են սույն Ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն
«Երևանի ՋերմաԷլեկտրակենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն
2024թ.-ի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

հազ. դրամ

	Բաժնետիրական կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Վերագնահատման պահուստ	Պահուստային կապիտալ	Կուտակված շահույթ	Ընդամենը
Մնացորդը առ 31 դեկտեմբեր 2022թ.	9,945,202	11,264,865	3,293,020	-	26,658,393	51,161,480
Կապիտալի համալրում	2,684,594	11,297	-	1,491,780	(1,491,780)	2,695,890
Տարվա շահույթ	-	-	-	-	5,172,334	5,172,334
Շահաբաժիններ	-	-	-	-	(17,400,693)	(17,400,693)
Վերագնահատման պահուստի իրացում՝ շահութահարկի ազդեցությունը հաշվի առած		-	(861,262)	-	861,262	-
Մնացորդը առ 31 դեկտեմբեր 2023թ.	12,629,796	11,276,162	2,431,758	1,491,780	13,799,516	41,629,012
Կապիտալի համալրում	22,291,223	155	-	402,689	(402,689)	22,291,378
Տարվա շահույթ	-	-	-	-	1,903,826	1,903,826
Նախորդ տարվա շահույթի ճշգրտում	-	-	-	-	(10,527)	(10,527)
Շահաբաժիններ	-	-	-	-	(841,883)	(841,883)
Վերագնահատման պահուստի իրացում՝ շահութահարկի ազդեցությունը հաշվի առած	-	-	(64,927)	-	64,927	0
Մնացորդը առ 31 դեկտեմբեր 2024թ.	34,921,019	11,276,317	2,366,831	1,894,469	14,513,171	64,971,807

11-ից 40-րդ էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն
«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն
2024թ.-ի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	01.01.2024-31.12.2024	01.01.2023-31.12.2023
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից	**հազ. դրամ**	**հազ. դրամ**
Հաճախորդներից ստացված դրամական միջոցներ	51,055,706	64,247,066
Վճարումներ մատակարարներին	(56,947,852)	(63,439,067)
Վճարումներ աշխատակիցներին	(735,303)	(714,810)
Վճարումներ բյուջե և սոց հիմնադրամ, այդ թվում՝	(1,288,677)	(3,002,132)
Ռեզիդենտի շահութահարկ	*(666,171)*	*(1,573,458)*
Այլ մուտքեր	20,390	11,698
Այլ ելքեր	(50,745)	(18,707)
Զուտ դրամական միջոցներ գործառնական գործունեությունից	**(7,946,481)**	**(2,915,952)**
Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից		
Ոչ ընթացիկ նյութական ակտիվների ձեռք բերում	(38,104)	(9,358)
Ավանդների ներդրում	(17,354,963)	(19,315,000)
Ավանդների մարում	23,815,007	22,549,000
Ստացված տոկոսներ	922,555	1,466,036
Զուտ դրամական միջոցներ ներդրումային գործունեությունից	**7,344,495**	**4,690,678**
Դրամական միջոցների հոսքեր ֆինանսական գործունեությունից		
Բաժնետիրական կապիտալի համալրում	5,656,010	2,695,890
Վճարված շահաբաժիններ	(1,607,208)	-
Վարկերի մարում	(2,329,189)	(2,424,833)
Վճարված տոկոսներ	(1,516,541)	(1,434,439)
Զուտ դրամական միջոցներ ֆինանսական գործունեությունից	**203,072**	**(1,163,382)**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/նվազում	**(398,914)**	**611,344**
Արտաժույթի փոխարժեքային տարբերություններ	**370**	**2,236**
Դրամական միջոցները և դրանց համարժեքները ժամանակաշրջանի սկզբի դրությամբ	**770,913**	**157,333**
Դրամական միջոցները և դրանց համարժեքները ժամանակաշրջանի վերջի դրությամբ	**372,369**	**770,913**

11-ից 40-րդ էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
«Երևանի ՋերմաԷլեկտրակենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն

1. Ընդհանուր տեղեկություններ

«Երևանի ՋերմաԷլեկտրակենտրոն» ընկերությունը հիմնադրվել է 1963թ: «Երևանի ջերմաէլեկտրակենտրոն» պետական փակ բաժնետիրական ընկերությունը (Ընկերությունը) ստեղծվել է 1997թ.:

Ընկերության հիմնական գործունեությունն է՝

էլեկտրական էներգիայի արտադրություն ՀՇԳՑ էներգաբլոկում՝ կայանի անվտանգ և արդյունավետ շահագործման ապահովման պայմաններում,

ՀՀ էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի կանոնների և լիցենզիայի համաձայն՝ որպես ՀԾՄ

1) Հաշվեկշռման ծառայություն մատուցում ՝ Հաշվեկշռման շուկայում իրականացնելով դրա համար անհրաժեշտ էլեկտրական էներգիայի առուվաճառք,

2) հաշվեկշռման և հաճախականության կարգավորման նպատակով երկրորդային և երրորդային պահուստի ապահովման ծառայության մատուցում ՝ գնելով դրա համար անհրաժեշտ հզորություն:

Նշված մասով ընկերությունը իրականացնում է հաշվեկշռող էլեկտրական էներգիայի առուվաճառք, ինչպես նաև սպառման համակարգ ունեցող ԷՄՇ առևտրի մասնակիցներին հաշվեկշռման և հաճախականության կարգավորման նպատակով երկրորդային և երրորդային պահուստի ապահովման ծառայություն մատուցելու նպատակով Հանձնաժողովի սահմանած կարգավորվող սակագներով ձեռք է բերում Հաշվեկշռման և հաճախականության կարգավորման նպատակով երկրորդային և երրորդային պահուստ ապահովող արտադրողների տնօրինելի հզորությունները,

3) էլեկտրական էներգիայի ներկրում և արտահանում:

Ընկերության գործունեությունը՝ ներառյալ սակագնային քաղաքականությունը, կարգավորում է Հայաստանի Հանրապետության Հանրային Ծառայությունները Կարգավորող Հանձնաժողովը:

Երևանի ՋԷԿ-ի թվով յոթ տուրբոագրեգատներից առաջինը՝ 50 ՄՎտ հզորությամբ առաջին տուրբինային տեղակայանքը շահագործման է հանձնվել 1963թ., իսկ վերջինը՝ 1967թ.:

Շահագործման մեջ լինելով ավելի քան 40 տարի՝ էլեկտրակայանի ագրեգատները և օժանդակ սարքավորումները ենթարկվել են ֆիզիկական և բարոյական էական մաշվածության՝ սպառելով իրենց աշխատանքային նորմատիվային պաշարները, որի հետևանքով բնականաբար զգալիորեն ընկել է կայանի շահագործման հուսալիությունը և էլեկտրական ու ջերմային էներգիայի արտադրության արդյունավետությունը:

2005թ. մարտի 29-ին ՀՀ կառավարության և միջազգային համագործակցության Ճապոնիայի բանկի (ՄՀՃԲ) միջև ստորագրվել է վարկային պայմանագիր «Երևանի համակցված շոգեգազային ցիկլով էլեկտրակայանի (էներգաբլոկ) նախագծի» իրականացման վերաբերյալ: Նշված համաձայնագրի հիման վրա ՄՀՃԲ-ն ՀՀ կառավարությանը տրամադրվել է վարկ արտոնյալ պայմաններով՝ հատկացնելով 26,409 միլիոն ճապոնական իեն: Նոր գործարանի շինարարությունը սկսվել է 2006թ. և ավարտվել է 2010թ.: Այն շահագործման է հանձնվել 2010թ. ապրիլին:

Ընկերության աշխատակիցների միջին ցուցակային թվաքանակը 2024թ. կազմել է 181 մարդ (2023թ.՝ 182 մարդ):

Ընկերության կանոնադրության փոփոխությունը պետական ռեգիստրում գրանցվել է 2006թ. սեպտեմբերի 8-ին, գրանցման համարը՝ 269.070.00255:

Ընկերության միակ բաժնետերը հաշվետու ամսաթվին և նախորդ տարիներին Հայաստանի Հանրապետությունն է:

Ընկերության կանոնադրական կապիտալը 31.12.2024թ. դրությամբ կազմել է 34,921,019 հազար դրամ (31.12.2023թ.-ին՝ 12,629,796 հազար դրամ): Այն բաղկացած է 12,202,701 հատ հասարակ բաժնետոմսերից, յուրաքանչյուրի անվանական արժեքը՝ 2,861.745 դրամ (31.12.2023թ.-ին՝ 12,202,701 հատ

հասարակ բաժնետոմսից, յուրաքանչյուրի անվանական արժեքը՝ 1,035.00 դրամ):

Գործարար միջավայր

Ընկերությունն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանում: Հետևաբար, Ընկերության գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկաները, որոնց բնորոշ են զարգացող շուկայի հատկանիշներ: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակում են զարգանալ, սակայն ենթակա են տարբեր մեկնաբանությունների և հաճախակի փոփոխությունների, ինչը, այլ իրավական ու ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ, լրացուցիչ բարդություններ է ստեղծում Հայաստանում գործող կազմակերպությունների համար: Ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Ընկերության գնահատականն Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա գործարար միջավայրի ազդեցության վերաբերյալ:

Հայաստանի էլեկտրաէներգետիկական շուկայի ազատականացման և միջպետական առևտրի խթանման ուղղությամբ իրականացված աշխատանքների շրջանակներում 2022 թվականի փետրվարի 1-ից մեկնարկել է Հայաստանի էլեկտրաէներգետիկական շուկայի փուլային ազատականացումը և նախատեսվում է մինչև 2030 թվականի փետրվարի 1-ը ամբողջությամբ ազատականացնել: Արդյունքում՝ էլեկտրաէներգիա արտադրող որոշ կայաններ, այդ թվում նաև «Երևան ՋերմաԷլեկտրակենտրոն» ՓԲԸ-ն չեն ունենա ՀԾԿՀ-ի կողմից ձևավորված սակագին, և կսկսեն վաճառել իրենց էլեկտրաէներգիան շուկայում առկա պահանջարկի և առաջարկի արդյունքում ձևավորված գնով: Նրանք կդառնան մեծածախ շուկայի մասնակիցներ, որի արդյունքում սուբյեկտները էլեկտրաէներգիան ձեռք կբերեն շուկայական պայմաններում:

Այսպիսի գործառնական միջավայրն էական ազդեցություն ունի Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա: Ձեռնարկվում են անհրաժեշտ միջոցառումներ Ընկերության գործունեության կայունությունն ապահովելու նպատակով:

2. Համապատասխանությունը

Հաշվապահական հաշվառումը վարվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան: Ֆինանսական հաշվետվությունները կազմվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին (ՖՀՄՍ) համապատասխան, ինչպես հրապարակվել է հաշվապահական հաշվառման միջազգային ստանֆարտների խորհրդի(ՀՀՄՍԽ) կողմից:

3. Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթը

ՀՀ արժույթը ՀՀ դրամն է, որը Ընկերության ֆունկցիոնալ և ներկայացման արժույթն է: Ֆինանսական տեղեկատվությունը ցույց է տրված հազար դրամներով՝ առանց ստորակետից հետո տասնորդական նիշի:

4. Հաշվապահական կարևոր դատողությունները և գնահատման անորոշության հիմնական աղբյուրները

Ֆինանսական հաշվետվությունների կազմումը ղեկավարությունից պահանջում է կատարել դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք նշանակալի ազդեցություն են թողնում այդ հաշվետվություններում ճանաչված գումարների վրա: Գնահատումները և հիմքում ընկած ենթադրությունները վերանայվում են:

Անընդհատության սկզբունք. Ընկերության ղեկավարությունը, հիմնվելով կատարված դատողությունների վրա, ունի հիմնավորված ակնկալիք, որ Ընկերությունը կարող է շարունակել իր գործառնական գործունեությունը տեսանելի ապագայում: Ուստի Ընկերությունը շարունակում է որդեգրել անընդհատության սկզբունքը իր ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակով:

Դատողությունների, գնահատականների և ենթադրությունների օգտագործում

Ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ-ների պահանջների համաձայն պատրաստելու համար Ընկերության ղեկավարությունը կատարել է ակտիվների և պարտավորությունների ներկայացմանը, ինչպես նաև պայմանական պարտավորությունների և ակտիվների բացահայտմանը վերաբերող մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման վրա կարևոր ազդեցություն ունեցող դատողություններ

Հետևյալները Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքանության կիրառման նպատակով ղեկավարության կողմից կատարված կարևոր դատողություններ են, որոնք էական ազդեցություն ունեն ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների վրա:

ա) Հասույթի ճանաչում – Պրինցիպալ թե՞ գործակալ (ծնթ. 6.10)

Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման վրա կարևոր ազդեցություն ունեցող գնահատումներ և ենթադրություններ

Հետևյալները Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքանության կիրառման նպատակով ղեկավարության կողմից կատարված կարևոր գնահատումներ և ենթադրություններ են, որոնք էական ազդեցություն ունեն ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների վրա:

ա) Իրական արժեքի չափում (ծնթ. 29)

Ընկերության ֆինանսական հաշվետվություններում ներառված որոշ ակտիվներ և պարտավորություններ պահանջում են չափումներ իրական արժեքով և/կամ իրական արժեքի բացահայտում:

Ընկերության ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի չափումը հնարավորինս հիմնվում է դիտարկելի շուկայից ստացվող ելակետային տվյալների վրա: Իրական արժեքի չափումները սահմանելու համար օգտագործվող ելակետային տվյալները դասակարգվում են ըստ տարբեր մակարդակների՝ կախված նրանից, թե որքանով են գնահատման մեթոդի մեջ օգտագործվող արդյունքները դիտարկելի («իրական արժեքի աստիճանակարգ»):

• Մակարդակ 1. Նույն ակտվների կամ պարտավորությունների գծով ակտիվ շուկաներում գնանշվող գներ (չճշգրտված)

• Մակարդակ 2: Դիտարկելի ուղղակի կամ անուղղակի ելակետային տվյալներ, Մակարդակ 1-ի տվյալներից տարբեր

• Մակարդակ 3: Ոչ դիտարկելի ելակետային տվյալներ (հիմնված չեն դիտարկվող շուկայի տվյալների վրա)

Իրական արժեքների աստիճանակարգում այն մակարդակը, որին դասվում է իրական արժեքի չափումը, պետք է որոշվի ամենացածր մակարդակի ելակետային տվյալի հիման վրա, որը նշանակալի է ամբողջությամբ վերցրած իրական արժեքի չափման համար: Իրական արժեքի տեղափոխությունները մի մակարդակից դեպի մյուսը ճանաչվում են այն ժամանակաշրջանում, որի ընթացքում տեղի են ունենում այդ տեղափոխությունները:

բ) Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետ (ծնթ. 6.2)

Հիմնական միջոցների օգտակար գործողության ժամկետները գնահատվել են հիմնվելով ակտիվների ակնկալվող օտագործման առավել հավանական գնահատումներից, ինչպես նաև, նրանց գծով օգտագործման շարունակման մտադրվածությունից ելնելով: Ղեկավարությունը կարծում է, որ հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետները էականորեն չեն տարբերվում իրենց տնտեսական հնարավոր ժամկետներից: Եթե հիմնական միջոցների փաստացի օգտագործման ժամկետները տարբերվեն առկա գնահատումներից, ապա դա կունենա էական ազդեցություն ֆինանսական հաշվետվությունների վրա:

գ) Դեբիտորական պարտքերի և այլ ֆինանսական ակտիվների արժեզրկում (ծնթ. 10)

Ֆինանսական ակտիվների արժեզրկումը գնահատվում է պարբերաբար: 31.12.2024թ. դրությամբ, արժեզրկված դեբիտորական պարտքերի գումարը ընթացիկ արժեքը կազմում էր՝ 404,575 հազար դրամ (31.12.2023թ.՝ 404,575 հազար դրամ), իսկ այլ ֆինանսական ակտիվների գծով 214 հազար դրամ:

Ղեկավարությունը կատարում է դատողություններ հիմնվելով ապագա դրամական հոսքերում փոփոխությունները՝ գնահատելու արժեզրկումից կորուստը, երբ հաճախորդը կամ փոխառուն ունեն ֆինանսական դժվարություններ: Երբ, դեբիտորական պարտքերի և այլ ֆինանսական ակտիվների գծով փաստացի փոխհատուցումը տարբերվում է ակնկալիքից, ապա տվյալ ակտիվների ընթացիկ արժեքը փոխվում է:

Գործարքներ արտարժույթով

Արտարժույթով իրականացված գործարքները փոխարկվում են Դրամի՝ գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Որպես փոխարժեք ընդունվում է Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից հրապարակված արժութային շուկայում արտարժույթի նկատմամբ ՀՀ դրամի միջին փոխարժեքը:

Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները եւ պարտավորությունները վերագնահատվում են հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ որոշվող դրույքաչափերով: Չմարված դրամային ակտիվների եւ պարտավորությունների վերագնահատման արդյունքում առաջացող փոխարժեքային տարբերությունները անմիջապես ճանաչվում են շահույթում կամ վնասում:

Փոխկապակցված անձանց հետ գործարքների սկզբնական ճանաչում. Բնականոն գործունեության ընթացքում Ընկերությունը ունենում է գործարքներ իր կապակցված կողմերի հետ: Դատողությունը կիրառվում է որոշելու, թե արդյոք գործարքները գնահատվում են շուկայական կամ ոչ շուկայական տոկոսադրույքներով, երբ առկա չէ ակտիվ շուկա նման գործարքների համար: Դատողության համար հիմք է հանդիսանում չկապակցված կողմերի հետ նման տեսակի գործարքների գնահատումը և արդյունավետ տոկոսադրույքի վերլուծությունը:

5. Նոր և վերանայված ՖՀՄՍ ստանդարտների ընդունում

Ընթացիկ տարում Ընկերությունն ընդունել է իր գործունեության համար կիրառել է 2024թ. հունվարի 1-ից սկսվող ժամանակաշրջանների համար ուժի մեջ մտած բոլոր նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) և ՀՀՄՍԽ-ի Մեկնաբանման կոմիտեի (ՄԿ) կողմից:
Նշված փոփոխությունների բնույթը և ազդեցությունը բացահայտված են ստորև:

Նոր և վերանայված ստանդարտներ և մեկնաբանություններ, որոնք կիրառելի են 2024թ. հունվարի 1-ից և դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար

Մի շարք նոր ստանդարտներ գործում են 2024թ. հունվարի 1-ին կամ հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար, և թույլատրվում է այդ ստանդարտների վաղաժամ կիրառումը:
Այնուամենայնիվ, այս առանձին ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս Ընկերությունը վաղաժամ չի կիրառել նոր կամ փոփոխված ստանդարտները:

Ստանդարտ	*Ստանդարտի կամ մեկնաբանության անունը*
ՖՀՄՍ 18	Տեղեկատվության ներկայացում և բացահայտում ֆինանսական հաշվետվություններում (ՀՀՄՍ 1 փոխարեն)

Նոր և վերանայված ստանդարտներ և մեկնաբանություններ, որոնք կիրառելի են 2024թ. հունվարի 1-ից և դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար

Այս ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից թողարկվել են որոշակի նոր ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք սակայն դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Ընկերության] կողմից:
Ղեկավարությունը կանխատեսում է, որ բոլոր կիրառելի հրապարակումները կներդրվեն Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականությունում սկսած հրապարակման ուժի մեջ մտնելու

ամսաթվին հաջորդող առաջին իսկ ժամանակաշրջանից:
Ղեկավարության կանխատեսմամբ այս փոփոխությունները էական ազդեցություն չեն ունենա Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա և ներկայացված են ստորև.

Ստանդարտ	*Ստանդարտի կամ մեկնաբանության անունը*	*Տվյալ ամսաթվին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար կիրառելի*
ՀՀՄՍ 21	Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետևանքները (ՀՀՄՍ 21 փոխարեն)	1 հունվարի 2024թ.
ՖՀՄՍ 7	Ֆինանսական գործիքներ. Բացահայտումներ (ՖՀՄՍ 7 փոխարեն)	1 հունվարի 2024թ.
ՖՀՄՍ 9	Ֆինանսական գործիքներ (ՖՀՄՍ 9 փոխարեն)	1 հունվարի 2024թ.

6. Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի համառոտ նկարագիրը

6.1. Չափման հիմքը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են հաշվեգրման սկզբունքով և սկզբնական արժեքի մեթոդով կամ ամորտիզացվող արժեքով, բացառությամբ հետևյալ հոդվածների.

- Վերագնահատված արժեքով չափվող հիմնական միջոցներ (ծնթ. 6.2)

6.2. Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները, որոնք օգտագործվում են ծառայությունների մատուցման կամ վարչական նպատակներով, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված են վերագնահատված արժեքով, որն իրենից ներկայացնում է վերագնահատման օրվա դրությամբ հիմնական միջոցների իրական արժեքը՝ հանած հետագա կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստները: Ցանկացած կուտակված մաշվածություն վերագնահատման օրը բացառվում է ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքից և ակտիվի վերագնահատված արժեքում ներկայացվում է զուտ արժեքը: Վերագնահատումներն իրականացվում են բավարար պարբերականությամբ այնպես, որ հաշվեկշռային արժեքն էականորեն չտարբերվի հաշվետու ամսաթվի դրությամբ իրական արժեքից:

Հիմնական միջոցների վերագնահատումից արժեքի աճը վերագրվում է այլ համապարփակ եկամուտներին և արտացոլվում է սեփական կապիտալում՝ որպես վերագնահատման պահուստ: Սակայն, եթե այդ աճը վերականգնում է նույն ակտիվի նախկին վերագնահատումների արդյունքում առաջացած նվազումը, այն ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ որպես եկամուտ այն չափով, որով նախկինում նվազումը ճանաչվել էր որպես ծախս: Երբ հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքը վերագնահատման հետևանքով նվազում է, նվազումը ճանաչվում է շահույթում կամ վնասում այն չափով, որը գերազանցում է նույն ակտիվի գծով նախորդ վերագնահատումից առաջացած վերագնահատման աճը:

Վերագնահատումից աճը ճանաչվում է կուտակված շահույթում Ընկերության կողմից ակտիվի օգտագործմանը զուգահեռ: Կուտակված շահույթում ճանաչված վերագնահատումից աճն իրենից ներկայացնում է ակտիվի վերագնահատված հաշվեկշռային արժեքի հիման վրա հաշվարկված մաշվածության և ակտիվի սկզբնական արժեքի հիման վերահաշվարկված մաշվածության տարբերությունը: Վերագնահատված հիմնական միջոցի միավորի իրացման կամ դուրսգրման դեպքում վերագնահատման պահուստում դրա գծով առկա վերագնահատումից աճը ուղղակիորեն վերագրվում է կուտակված շահույթին:

Կառուցման ընթացքում գտնվող հիմնական միջոցները, որոնք ապահովում են ապագա տնտեսական

տալու կամ վարչական, կամ դեռ անորոշ նպատակով, հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառվում է ուղղակիորեն վերագրելի ծախսումները, տեղանքի նախապատրաստման, տեղակայման ծախսումները, մասնագիտական վճարները, իսկ որակավորվող ակտիվի դեպքում՝ նաև կապիտալացման ենթակա փոխառության ծախսումները՝ համաձայն Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականության:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Հիմնական միջոցի՝ որպես առանձին ակտիվ հաշվառվող միավորի բաղկացուցչի փոխարինման ծախսումները կապիտալացվում են դուրս գրված բաղկացուցչի հաշվեկշռային արժեքի հետ: Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացվում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կատարվելու ժամանակաշրջանում:

Հիմնական միջոցի յուրաքանչյուր (հիմնական) բաղկացուցիչ (առանձնացնելի միավոր) ճանաչում է առանձին ակտիվ այն դեպքում, երբ՝ հավանական է, որ այդ միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները կհոսեն դեպի Ընկերություն, և միավորի սկզբնական արժեքը կարող է արժանահավատորեն չափվել:

Հիմնական միջոցի միավորի հիմնական բաղադրիչները հիմնական միջոցի միավորի կազմում հաշվառվում են առանձին:

Մաշվածություն

Հիմնական միջոցների բոլոր դասերի նկատմամբ կիրառվում է մաշվածության հաշվարկման գծային մեթոդը:

Հիմնական միջոցների օգտակար ծառայությունը որոշելիս հաշվի են առնվում հետևյալ գործոնները.

ա) Ընկերության կողմից ակտիվի ենթադրվող օգտագործելիությունը,

բ) ակնկալվող ֆիզիկական մաշվածությունը,

գ) տեխնիկական հնացածությունը,

դ) հիմնական միջոցի օգտագործման իրավական կամ նման այլ սահմանափակումներ:

Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները հետևյալն են.

Շենքեր և շինություններ	20-40 տարի
Էներգոէլեկտրակենտրոններ	40 տարի
Փոխանցող հարմարանքներ	5-40 տարի
Մեքենաներ և սարքավորումներ	5-40 տարի
Տրանսպորտային միջոցներ	5 տարի
Արտադրատնտեսական գույք	5-40 տարի
Այլ հիմնական միջոցներ	2-10 տարի

Ակտիվի մաշվածությունը սկսում է հաշվարկվել, երբ այն մատչելի է օգտագործման համար, այսինքն երբ այն գտնվում է այնպիսի վայրում և վիճակում, որն անհրաժեշտ է ղեկավարության նախանշած նպատակով այն օգտագործելու համար: Ակտիվի մաշվածության հաշվարկումը դադարում է ակտիվն ապաճանաչելու ամսաթվերից ամենավաղով:

Հիմնական միջոցի մաշվածության գումարը իր օգտակար ծառայության ընթացքում պարբերաբար բաշխելու համար կիրառվում է մաշվածության հաշվարկման գծային մեթոդը:

6.3. Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Ընկերության կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված

ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

6.4. Ակտիվների արժեզրկում

Ընկերության հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ, որոշելու՝ արդյոք առկա՞ է որևէ հայտանիշ, ըստ որի ակտիվը կարող է արժեզրկված լինել: Եթե որևէ այդպիսի հայտանիշ առկա է, ապա գնահատվում են այդ ակտիվի (կամ ակտիվների խմբի) փոխհատուցվող գումարները և համեմատվում հաշվեկշռային արժեքի հետ: Եթե գնահատված փոխհատուցվող գումարը փոքր է, ապա հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև գնահատված փոխհատուցվող գումարը, և արժեզրկումից կորուստները ճանաչվում են անմիջապես շահույթում կամ վնասում:

Նմանապես, յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ գնահատվում է պաշարների արժեզրկված լինելը՝ պաշարի յուրաքանչյուր հոդվածի (կամ միանման պաշարների խմբի) հաշվեկշռային արժեքը դրա վաճառքի գնի՝ հանած համալրման և վաճառքի ծախսումները, հետ համեմատելու միջոցով: Եթե պաշարի հոդվածը (կամ միանման պաշարների խումբը) արժեզրկվել է, դրա հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև վաճառքի գին՝ հանած համալրման և վաճառքի ծախսումները, իսկ արժեզրկումից կորուստը ճանաչվում է անմիջապես շահույթում կամ վնասում:

Եթե արժեզրկումից կորուստը հետագայում հակադարձվում է, ակտիվի (կամ ակտիվների խմբի) հաշվեկշռային արժեքը ավելացվում է մինչև դրա փոխհատուցվող գումարի վերանայված գնահատականը (պաշարների դեպքում, վաճառքի գին՝ հանած համալրման և վաճառքի ծախսումներ), սակայն ոչ ավելի, քան այն գումարը, որը կորոշվեր, եթե նախորդ տարիներին ակտիվի (կամ ակտիվների խմբի) գծով ոչ մի արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ: Արժեզրկումից կորստի հակադարձումը ճանաչվում է անմիջապես շահույթում կամ վնասում:

6.5. Պաշարներ

Պաշարների ինքնարժեքը ներառում է ձեռքբերման ծախսումները և պաշարները ներկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված այլ ծախսումներ:

Փոխադարձ փոխարկելի հանդիսացող պաշարների ինքնարժեքը որոշվում է կշռված միջին բանաձևով:

Փոխադարձ փոխարկելի չհանդիսացող պաշարների, մասնավորապես ավտոմեքենաների ինքնարժեքը որոշվում է դրանց կոնկրետ ծախսումների հստակ առանձնացման միջոցով:

Պաշարները ներկայացված են ինքնարժեքի և հնարավոր իրացման զուտ արժեքի նվազագույնով:

Պաշարների իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վա¬ճառ¬քի ձևավորվող գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները:

6.6. Ֆինանսական գործիքներ

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Ընկերությունը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվներն ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ այն ժամանակ, երբ ֆինանսական ակտիվները բոլոր նշանակալից ռիսկերով ու հատույցներով փոխանցվում են երրորդ կողմին:

Ֆինանսական ակտիվները ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվներ

Ընկերությունը իր ֆինանսական ակտիվները իրենցից ներկայացնում են ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ: Այս ակտիվները հիմնականում առաջանում են հաճախորդներին ապրանքների եւ ծառայությունների մատուցումից (օրինակ `առեւտրային դեբիտորական պարտքեր),

ինչպես նաև ներառում են այլ ֆինանսական ակտիվներ, որոնց նպատակն է այդ ակտիվները պահել, պայմանագրային դրամական հոսքերի հավաքման նպատակով, իսկ պայմանագրային դրամական միջոցների հոսքերը իրենցից զուտ ներկայացնում են մայր գումարի և տոկոսների վճարումներ: Դրանք սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով, գումարած գործարքների գծով ծախսումները, որոնք ուղղակիորեն կապված են դրանց ձեռքբերման կամ թողարկման հետ, եւ հետագայում դրանք չափվում են ամորտիզացված արժեքով, օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ նվազեցման արժեզրկմանպահուստը:

Ընթացիկ եւ ոչ ընթացիկ առեւտրային դեբիտորական պարտքերի գծով վճարունակության ակնկալվող կորուստները գնահատելու նպատակով կիրառում է ՖՀՄՍ 9-ի պարզեցված մոտեցումը՝ օգտագործելով ողջ ժամկետի համար վճարունակության ակնկալվող կորուստների գնահատում: Այս գործընթացում գնահատվում է առեւտրային դեբիտորական պարտքերի չվճարման հավանականությունը: Այդ հավանականությունը, այնուհետեւ, բազմապատկվում է կանխատեսվող կորստի գումարի չափով՝ առեւտրային դեբիտորական պարտքերի ողջ ժամկետի գծով ակնկալվող կորստի գնահատման նպատակով: Զուտ արժեքով ներակայացվող առեւտրային դեբիտորական պարտքերի գծով, այդպիսի պահուստները հաշվառվում են առանձին հաշվով՝ ներառելով որպես իրացման ինքնարժեք համապարփակ արդյունքի հաշվետվությունում: Առեւտրային դեբիտորական պարտքերի անհավաքելիության հաստատման դեպքում, ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը հաշվանցվում է այդ ակտիվի գծով ձևավորված պահուստի հաշվին:

Կապակցված կողմերից դեբիտորական պարտքերի եւ կապակցված կողմերին տրամադրված փոխառությունների արժեզրկման պահուստները ճանաչվում են վճարունակության կորուստների ակնկալվող մոդելի հիման վրա: Պահուստի գումարի որոշման մեթոդաբանությունը հիմնված է այն հանգամանքի վրա, թե ֆինանսական ակտիվի սկզբնական ճանաչումն պահից հետո արդյոք եղել է վճարունակության ռիսկի զգալի աճ: Այն ակտիվների համար, որոնց սկզբնական ճանաչումն պահից հետո չի եղել է վճարունակության ռիսկի զգալի աճ, ճանաչվում է վճարունակության ռիկսի տասներկու ամսվա ակնկալվող կորուստները՝ համախառն տոկոսային եկամտի հետ միասին: Այն ակտիվների համար, որոնց վճարունակության ռիսկը զգալիորեն աճել է, ճանաչվում է ողջ ժամանակաշրջանի համար վճարունակության ռիսկի ակնկալվող կորուստ՝ համախառն տոկոսային եկամտի հետ միասին: Այն ֆինանսական ակտիվների համար, որոնք դիտարկվում են որպես վճարունակությունը վատթարացած, ճանաչվում է ողջ ժամանակաշրջանի համար վճարունակության ռիսկի ակնկալվող կորուստ՝ զուտ արժեքի վրա հաշվարկված տոկոսային եկամտի հետ միասին: Ընկերության ֆինանսական ակտիվները, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, ներառում են առեւտրային եւ այլ դեբիտորական պարտքեր, կապակցված կողմերին տրամարդված փոխառությունները, ինչպես նաեւ դրամական միջոցները եւ դրանց համարժեքները: Դրամական միջոցները եւ դրանց համարժեքները ներառում են դրամական միջոցները և կարճաժամկետ ավանդներ բանկերում:

Ֆինանսական պարտավորություններ

Ընկերության ֆինանսական պարտավորությունները ներառվում են վարկերը և փոխառությունները և առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը: Ընկերության ֆինանսական պարտավորությունները, ըստ կատեգորիաների, ներկայացված են ծանոթագրություն 10, 11-ում:

Վարկերը և փոխառությունները սկզբնապես ճանաչում են իրական արժեքով՝ առանց գործարքային ծախսերի: Սկզբնական ճանաչումից հետո վարկերը և փոխառությունները չափվում են ամորտիզացված արժեքով, իսկ այս արժեքի և մարման արժեքի միջև տարբերությունը փոխառության ժամկետի ընթացքում ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով: Տոկոսավճարները և փոխառությունների հետ կապված այլ ծախսերը ծախսագրվում են կատարմանը զուգահեռ՝ որպես ֆինանսական ծախսերի մի մաս, բացի որակավորվող ակտիվի ձեռքբերմանը, կառուցմանը կամ արտադրությանն ուղղակիորեն վերագրվող փոխառության ծախսումներից, որոնք կապիտալացվում են որպես այդ ակտիվի արժեքի մաս:

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:

6.7. Սեփական կապիտալ

Ընկերության կողմից թողարկվող կապիտալի գործիքները հաշվառվում են անվանական արժեքով: Բաժնետիրական կապիտալն իրենից ներկայացնում է թողարկված բաժնետոմսերի անվանական արժեքը: Վերագնահատման պահուստը ներառվում է հիմնական միջոցների վերագնահատումից օգուտներն ու վնասները:

Շահաբաժինները ճանաչվում են որպես պարտավորություն այն ժամանակաշրջանում, երբ դրանք հայտարարվում են: Շահութաբաժինների հաշվարկման բազան սահմանված է ՀՀ կառավարության 12 հոկտեմբերի 2023թ. թիվ 1748-Ն, իսկ հաշվարկման կարգը հաստատված է ՀՀ ֆինանսների նախարարության առ 27 փետրվարի 2024թ. թիվ 47-Լ որոշումներով:

6.8. Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումներ

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումները ներառում են աշխատավարձերը, կարճաժամկետ փոխհատուցելի բացակայությունները (ինչպիսիք են, օրինակ, վճարովի տարեկան արձակուրդները և հիվանդության հետ կապված վճարովի արձակուրդները) և պարգևավճարները:

6.9. Պահուստներ, պայմանական պարտավորություններ և պայմանական ակտիվներ ճանաչում

Պահուստը ճանաչվում է, երբ՝

ա) Կազմակերպությունն ունի ներկա պարտականություն (իրավական կամ կառուցողական) որպես անցյալ դեպքերի արդյունք.

բ) հավանական է, որ այդ պարտականությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, և

գ) պարտականության գումարը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Պայմանական պարտավորությունը և պայմանական ակտիվը չեն ճանաչվում:

Չափում

Որպես պահուստ ճանաչված գումարը իրենից ներկայացնում է հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ներկա պարտականությունը մարելու համար պահանջվող ծախսումների լավագույն գնահատականը:

Եթե ժամանակի մեջ դրամի արժեքի ազդեցությունը էական է, ապա պահուստի գումարը իրենից ներկայացնում է այն ծախսումների ներկա արժեքը, որոնք, ըստ ակնկալության, կպահանջվեն այդ պարտականությունը մարելու համար:

Զեղչման դրույքը (կամ դրույքները) այն դրույքն է (կամ դրույքները), որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի և այդ պարտավորությանը հատուկ ռիսկերի ընթացիկ շուկայական գնահատումները: Զեղչման դրույքը չպետք է արտացոլի այն ռիսկերը, որոնց գծով դրամական միջոցների ապագա հոսքերի գնահատումներն արդեն ճշգրտվել են:

Պահուստը օգտագործվում է միայն այն ծախսումների դիմաց, որոնց գծով այդ պահուստը սկզբնապես ճանաչվել էր:

6.10. Հասույթ

Ընկերության հասույթն առաջանում է էլեկտրաէներգիայի ու բնական գազի վաճառքից և հզորության տրամադրումից, ինչպես նաև էլեկտրաէներգիայի և գազի փոխանակումից:

Կատարողական պարտականություն եւ հասույթի ճանաչման պահը

Ընկերության հասույթի մեծամասնությունը առաջանում է էլեկտրաէներգիայի վաճառքից, որոնց գծով հասույթը ճանաչվում է վերահսկումը պատվիրատուին փոխանցելու պահին: Վերահսկման փոխանցումը հիմնականում տեղի ունի, երբ էլեկտրաէներգիան առաքվում է հաճախորդին: Վերահսկողության

փոխանցման պահը որոշելու համար նման դեպքերում չի պահանջվում բարդ դատողություն: Երբ էլեկտրաէներգիան առաքվել է համաձայնեցված վայր, ապա դրանից հետո Ընկերությունը այլևս չունի տնօրինման իրավունք, սովորաբար ձեռք է բերում վճարման ստացման իրավունք:

Գործարքի գնի որոշում

Ընկերության հասույթները ստացվում են ֆիքսված գների պայմանագրերից եւ, հետեւաբար, յուրաքանչյուր պայմանագրից ստացված հասույթի գումարը որոշվում է այդ ֆիքսված գներով:

Գնի բաշխում կատարողական պարտականությունների վրա Պայմանագրերի մեծ մասի դեպքում յուրաքանչյուր ապրանքի համար ֆիքսված է միավորի գինը:

Կիրառման բացառումներ

Ընկերությունն օգտվել է հետևյալ կիրառման բացառումներից.

- ֆինանսական բաղադրիչի չհաշվառում, եթե ապրանքի առաքման և գումարի ստացման միջև ժամանակահատվածը մեկ տարի կամ պակաս է, և
- պայմանագրի ձեռքբերման ծախսումները ճանաչվում են ծախս, եթե այլ կերպ ճանաչվելիք ակտիվի ամորտիզացիայի ժամկետը մեկ տարի կամ ավելի քիչ կլինի:

Ապրանքների փոխանակում

Երբ ապրանքները փոխանակվում են նույն բնույթի և արժեքի ապրանքներով և ծառայություններով փոխանակելու միջոցով, փոխանակումը չի դիտվում որպես հասույթ առաջացնող գործարք:

Երբ ապրանքները փոխանակվում են տարբեր բնույթի և արժեքի ապրանքներով և ծառայություններով փոխանակելու միջոցով, փոխանակումը դիտվում է որպես հասույթ առաջացնող գործարք: Հասույթը չափվում է ստացված ապրանքների իրական արժեքով՝ ճշգրտված ցանկացած փոխանցված դրամական միջոցների և դրանց համարժեքների գումարով: Երբ ստացված ապրանքների իրական արժեքը հնարավոր չէ արժանահավատորեն չափել, հասույթը չափվում է տրված ապրանքների իրական արժեքով՝ ճշգրտված ցանկացած փոխանցված դրամական միջոցների և դրանց համարժեքների գումարով:

6.11. Արտարժույթի փոխանակման փոխարժեքի փոփոխությունների հետևանքներ

Ընկերության ֆունկցիոնալ արժույթը ՀՀ դրամն է:

Արտարժույթով գործառնությունը սկզբնապես ճանաչման պահին հաշվառվում է ֆունկցիոնալ արժույթով՝ արտարժույթի գումարի նկատմամբ կիրառելով ֆունկցիոնալ արժույթի և արտարժույթի միջև գործառնության ամսաթվի դրությամբ սփոթ փոխանակման փոխարժեքը:

Որպես սփոթ փոխանակման փոխարժեք ընդունվում է արժութային շուկայում ձևավորված արտարժույթների միջին փոխարժեքը.

Արտարժույթ	31.12.2024	31.12.2023
1 ԱՄՆ դոլար	396.56 ՀՀ դրամ	404.79 ՀՀ դրամ
1 եվրո	413.89 ՀՀ դրամ	447.9 ՀՀ դրամ
1 Ճապոնական իեն	25.14 ՀՀ դրամ	28.57 ՀՀ դրամ

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջին՝

ա) արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով փակման փոխարժեքը.

բ) սկզբնական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում (ներկայացվում) են գործառնության ամսաթվի փոխանակման փոխարժեքով և

գ) իրական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում (ներկայացվում) են իրական արժեքի որոշման օրվա փոխանակման փոխարժեքով:

- *Փոխարժեքային տարբերությունների ճանաչումը*

Փոխարժեքային տարբերությունները, որոնք առաջանում են դրամային հոդվածների մարման արդյունքում, կամ երբ դրամային հոդվածները վերահաշվարկվում են մի փոխարժեքով, որը տարբերվում է տվյալ հաշվետու ժամանակաշրջանում դրանց սկզբնապես ճանաչման կամ նախորդ ֆինանսական հաշվետվություններում վերահաշվարկման փոխարժեքից, ճանաչվում են շահույթում կամ վնասում այն ժամանակաշրջանում, որում դրանք առաջացել են:

6.12. Շահութահարկ

Շահույթի կամ վնասի գծով հաշվետու տարվա շահութահարկը բաղկացած է ընթացիկ հարկից և հետաձգված հարկից:

Ընթացիկ հարկը տվյալ ժամանակաշրջանի հարկվող շահույթի գծով վճարման/(փոխհատուցման) ենթակա շահութահարկի գումարն է: Ընթացիկ հարկը ճանաչվում է որպես եկամուտ կամ ծախս և ներառվում է տվյալ ժամանակաշրջանի զուտ շահույթի կամ վնասի մեջ:

Ընկերության հետաձգված հարկերը (հետաձգված հարկային պարտավորությունները եւ հետաձգված հարկային ակտիվները) պայմանավորված են ժամանակավոր տարբերությունների (հարկվող եւ նվազեցվող ժամանակավոր տարբերություններ) եւ չօգտագործված հարկային կորուստի հետագա տարիներ փոխանցմամբ:
Ժամանակավոր տարբերությունների հետեւանքով առաջացած հետաձգված հարկերը հաշվարկվում են հաշվեկշռային մեթոդով, հիմնվելով ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար օգտագործված ակտիվների եւ պարտավորությունների հաշվեկշռային արժեքների եւ հարկման նպատակներով օգտագործված գումարների (հարկային բազայի) միջեւ ժամանակավոր տարբերությունների վրա:

Հետաձգված հարկային ակտիվ ճանաչվում է բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գծով այն չափով, որքանով հավանական է հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը:

6.13. Սխալներ

Ընկերությունը ուղղում է նախորդող ժամանակաշրջանի էական սխալները հետընթաց (բացառությամբ երբ անիրագործելի է կոնկրետ ժամանակաշրջանի վրա սխալի հետևանքների կամ դրա կուտակային հետևանքների որոշումը) դրանց հայտնաբերումից հետո հրապարակման համար հաստատված առաջին ֆինանսական հաշվետվությունների փաթեթում՝

ա) վերահաշվարկելով ներկայացված այն նախորդող ժամանակաշրջանի (ժամանակաշրջանների) համեմատելի գումարները, որոնցում տեղի է ունեցել սխալը, կամ

բ) եթե սխալը տեղի է ունեցել նախքան մինչև ներկայացված ամենավաղ ժամանակաշրջանը, ապա ակտիվների, պարտավորությունների և սեփական կապիտալի սկզբնական մնացորդները վերահաշվարկելով ներկայացված նախորդող ամենավաղ ժամանակաշրջանի համար:

6.14. Հաշվապահական հաշվառման գնահատումներում փոփոխություններ

Հաշվապահական հաշվառման գնահատումներում փոփոխության հետևանքը, բացառությամբ ստորև շարադրվածի, ճանաչվում է առաջընթաց՝ արտացոլվելով շահույթի կամ վնասի մեջ՝

ա) փոփոխման ժամանակաշրջանում, եթե փոփոխությունն ազդում է միայն տվյալ ժամանակաշրջանի վրա, կամ

բ) փոփոխման ժամանակաշրջանում և հետագա ժամանակաշրջաններում, եթե փոփոխությունը երկուսի վրա էլ ազդում է:

Այնքանով, որքանով հաշվապահական հաշվառման գնահատման փոփոխությունն առաջացնում է ակտիվների և պարտավորությունների փոփոխություն կամ առնչվում է սեփական կապիտալի որևէ հոդվածի հետ, այն ճանաչվում է համապատասխան ակտիվի, պարտավորության կամ սեփական կապիտալի հոդվածի հաշվեկշռային արժեքի ճշգրտման միջոցով՝ փոփոխության ժամանակաշրջանում:

Այն դեպքերում, երբ դժվար է տարբերակել հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունը հաշվապահական հաշվառման գնահատման փոփոխությունից, այն դիտվում է որպես հաշվառման գնահատման փոփոխություն՝ համապատասխան բացահայտմամբ:

6.15. Հաշվապահական հաշվառման քաղաքականությունում փոփոխություններ

Ընկերությունը փոփոխում է հաշվապահական հաշվառման քաղաքականությունը միայն այն դեպքում, եթե այդ փոփոխությունը հանգեցնում է ֆինանսական հաշվետվություններում Ընկերության ֆինանսական վիճակի, ֆինանսական արդյունքի և դրամական հոսքերի վրա գործառնությունների, այլ դեպքերի և իրադարձությունների ազդեցության վերաբերյալ առավել արժանահավատ և տեղին (ռելևանտ) տեղեկատվության ներկայացմանը:

Եթե Ընկերությունը հաշվապահական հաշվառման նոր քաղաքականությունը կիրառում է հետընթաց, ապա հաշվապահական հաշվառման նոր քաղաքականությունը կիրառում է նախորդող ժամանակաշրջանների համադրելի տեղեկատվության նկատմամբ: Երբ Ընկերության համար անիրագործելի է հաշվապահական հաշվառման նոր քաղաքականությունը կիրառել հետընթաց՝ բոլոր նախորդող ժամանակաշրջանների նկատմամբ նոր քաղաքականության կիրառման կուտակային հետևանքը որոշելու անկարողության պատճառով, ապա Ընկերությունը նոր քաղաքականությունը կիրառում է առաջընթաց՝ հնարավոր ամենավաղ ժամանակաշրջանից սկսած:

7. Հիմնական միջոցներ

	Շենքեր, շինություններ, կառուցվածքներ	Հողամասեր	Փոխանցող հարմարանքներ	Ջերմաէլեկտրակենտրոններ, սարքավորումներ	Տրանսպորտային միջոց	Անավարտ շինարարություն	Արտադրական գույք և այլ Հ/Մ	Ընդամենը
հունվարի 2023թ.	24,577,671	5,388,333	18,547,132	144,781,557	309,587	1,680,339	1,745,591	197,030,210
ստացումներ	-	-	-	8,139	-	-	497	8,636
դեցումներ	(5,189)	-	-	(1,032,976)	-	-	-	(1,038,164)
դասակարգում	-	-	-	-	-	-	-	-
դեկտեմբերի 2023թ.	24,572,482	5,388,333	18,547,132	143,756,720	309,587	1,680,339	1,746,088	196,000,682
ստացումներ	-	-	60,894	8,046,379	12,417	-	12,558	8,132,248
դեցումներ	-	-	(22,123)	(112,254)	-	-	(179)	(134,556)
դասակարգում	-	-	-	-	-	-	-	-
դեկտեմբերի 2024թ.	24,572,482	5,388,333	18,585,903	151,690,845	322,004	1,680,339	1,758,467	203,998,373
հունվարի 2023թ.	8,003,788	2,327,435	8,927,712	67,889,771	200,016	1,680,339	849,160	89,878,221
ստացումներ	644,781	-	406,427	3,780,015	11,115	-	31,870	4,874,208
դեցումներ	(2,082)	-	-	(2,793)	-	-	-	(4,875)
դասակարգում	-	-	-		-	-	-	-
դեկտեմբերի 2023թ.	8,646,487	2,327,435	9,334,139	71,666,993	211,131	1,680,339	881,030	94,747,554
ստացումներ	644,556	-	407,002	3,752,651	11,342	-	34,085	4,849,636
դեցումներ	-	-	-	-	-	-	(13)	(13)
դասակարգում	-	-	-	-	-	-	-	-
դեկտեմբերի 2024թ.	9,291,043	2,327,435	9,741,141	75,419,644	222,473	1,680,339	915,102	99,597,177
մնացորդային արժեք								
հունվարի 2023 թ.	16,573,883	3,060,898	9,619,421	76,891,786	109,571	-	896,431	107,151,990
դեկտեմբերի 2023թ.	15,925,995	3,060,898	9,212,993	72,089,727	98,456	-	865,058	101,253,128
դեկտեմբերի 2024թ.	15,281,439	3,060,898	8,844,762	76,271,201	99,531		843,365	104,401,196

2010թ.-ից Ընկերությունում շահագործվում է նոր ջերմաէլեկտրակենտրոնը՝ 205 ՄՎտ անվանական հզորությամբ և 103 ԳԿալ/ժ ջերմության առաքմամբ:

2020թ.-ին վերազինվել է համակցված շոգեգազային ցիկլով աշխատող էներգաբլոկը՝ ապահովելով հետևյալ բնութագիրը.

- ✓ Էլեկտրակայանի տեղակայված (դրվածքային) էլեկտրական հզորություն՝ 233.6 ՄՎտ
- ✓ Անվանական հզորությունը 250.6 ՄՎտ ԱյԷսՕ (ISO) պայմաններում
- ✓ Էլեկտրակայանի ջերմային հզորությունը՝ 434.9 ԳՋ/ժ:

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այդ ջերմաէլեկտրակայանի ընթացիկ արժեքը՝ ներառյալ նրան առնչվող շենք-շինությունները, կազմում 91,122,137 հազար դրամ է (2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 87,522,284 հազար դրամ) (ներքո՝ դ.2. կետ):

2018թ.-ից շահագործվում է 220/110/35 կՎ ենթակայանը, որի հաշվեկշռային արժեքը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում է 7,057,720 հազար դրամ (2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 7,422,375) (ներքո՝ դ.2. կետ):

Հիմնական միջոցների մեջ ներառված է հին ջերմաէլեկտրակենտրոնը, որի հաշվեկշռային/վերագնահատված արժեքը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ ներառյալ նրան առնչվող շենք-շինությունները, կազմում է՝ 3,160,441 հազար դրամ (2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 3,247,571 հազար դրամ) (ներքո դ.1. կետ): Հին ջերմաէլեկտրակենտրոնի շահագործումը դադարեցվել է նոր էլեկտրակայանի շահագործումից հետո:

ՀՀ վարչապետի 2020թ. մայիսի 25-ի թիվ 612-Ա որոշման շրջանակներում Ընկերությունը նախաձեռնել է հին էլեկտրակայանի չշահագործվող և ոչ պիտանի գույքի օտարման գործընթաց:

Հիմնական միջոցների գծով սահմանափակումներ

Բանկային վարկերը և փոխառություններն ապահովելու նպատակով Ընկերությունը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ գրավադրված են 24,460,187 հազար դրամի հիմնական միջոցներ (2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 25,390,078 հազար դրամի):

Իրական արժեքի չափում - հիմնական միջոցների վերագնահատում

Ընկերության հողամասերը և ենթակայանները չափվում են վերագնահատված արժեքով, որն իրենից ներկայացնում է վերագնահատման ամսաթվով իրական արժեքը՝ հանած հետագա կուտակված մաշվածությունը և հետագա կուտակված արժեզրկումը:

Ընկերության հողամասերի և ենթակայանի իրական արժեքը գնահատումը վերջին անգամ իրականացվել է 31.12.2017թ.-ի դրությամբ: Այն իրականացվել է "Արթին Էներգիայ" ՍՊԸ-ի կողմից, ով Ընկերությունից անկախ գնահատող է: Գնահատող կազմակերպությունը և իր գնահատողները ունեն համապատասխան որակավորումներ (CIPS, CCIM, NAR) և հանդիսանում են գնահատողների միջազգային միությունների անդամ, մասնավորապես՝ ՌԳՄ (RVU, Russia).

Հողամասերի իրական արժեքը որոշվել է շուկայի համեմատական մեթոդով, որը արտացոլում է նմանատիպ հողամասերի մոտ ժամանակներում վաճառքի գործարքները:

Շենքերի իրական արժեքը, որոնք շարունակվելու են օգտագործվել Ընկերության բնական գործունեությունում, մասնավարապես՝ 2010թ.-ին կառուցված նոր ենթակայանը, գնահատվել է կիրառելով Ծախսային մեթոդը, որն արտացոլում է շուկայի մասնակցի կողմից նմանատիպ որակներով և տարիքի ակտիվի ձեռքբերման կամ կառուցման ծախսը՝ ճշգրտված հնացվածությամբ: Բացի տարիների մաշվածությունից, հնացվածությունը ներառում է ֆիզիկական, ֆունկցիոնալ (տեխնոլոգիական) և տնտեսական հնացվածությունը:

Հետագա օգտագործման համար նախատեսված սարքավորումների, մասնավորապես, որոնք տեղադրված են նոր ջերմային էլեկտրակենտրոնում, իրական արժեքը գնահատվել է նմանատիպ սարքավորումների շուկայական արժեքի հիման վրա՝ ճշգրտելով հնացվածությունը:

Շենքերի ու սարքավորումների, որոնք պետք է ապամոնտաժվեն կամ օտարվեն, մասնավորապես՝ որոնք վերաբերվում են 1963թ.-ին կառուցված հին ջերմաէներգոկենտրոնին, իրական արժեքը գնահատվել է իրացվող գույքի կամ ապամոնտաժումից առաջացող արժեքավոր նյութերի, եթե այդպիսիք կան, շուկայական արժեքից հանելով ապամոնտաժման և իրացման ծախսումները:

Իրենց յուրահատուկ բնույթից կախված, վերագնահատված հողամասի, շենքերի և սարքավորումների իրական արժեքը դասակարգվում է իրական արժեքի աստիճանակարգի 3-րդ Մակարդակում:

Հին ջերմաէլեկտրակենտրոն, 31.12.2024թ.-ի դրությամբ

Հազար դրամ

Հիմնական միջոցների խմբեր	Սկզբնական արժեք	Կուտակված մաշվածություն, արժեզրկումից կորուստներ	Հաշվեկշռային արժեք
Շենք, շինություններ, կառուցվածքներ	5,693,685	(5,056,146)	637,539
Փոխանցող հարմարանքներ	1,353,449	(404,447)	949,002
Մեքենաներ, սարքավորումներ	2,364,493	(893,286)	1,471,207
Տրանսպորտային միջոցներ	194,426	(94,926)	99,500
Արտադրական, տնտեսական գույք, այլ Հ/Մ	52,138	(48,945)	3,193
Անավարտ կապ. շինարարություն	1,521,275	(1,521,275)	0
	11,179,466	**(8,019,025)**	**3,160,441**
Հողամասեր	2,569,978	-	2,569,978
	13,749,444	**(8,019,025)**	**5,730,419**

Նոր ջերմաէլեկտրակենտրոն, 31.12.2024թ.-ի դրությամբ

Հազար դրամ

Հիմնական միջոցների խմբեր	Սկզբնական արժեք	Կուտակված մաշվածություն, արժեզրկումից կորուստներ	Հաշվեկշռային արժեք
Շենք, շինություններ, կառուցվածքներ	18,890,587	(4,246,687)	14,643,900
Փոխանցող հարմարանքներ	1,045,858	(207,763)	838,095
Մեքենաներ, սարքավորումներ	100,589,795	(25,789,801)	74,799,994
Տրանսպորտային միջոցներ	4,976	(4,945)	31
Արտադրական, տնտեսական գույք, այլ Հ/Մ	1,393,599	(553,482)	840,117
	121,924,815	**(30,802,678)**	**91,122,137**
Նոր ենթակայան	9,281,356	(2,223,636)	7,057,720
Հողամասեր	490,920	-	490,920
	131,697,091	**(33,026,314)**	**98,670,777**

Զրո հաշվեկշռային արժեքով հիմնական միջոցներ

31 դեկտեմբերի 2024թ. դրությամբ հիմնական միջոցների կազմում հաշվառվում են զրո հաշվեկշռային արժեքով հիմնական միջոցներ՝ 12,117,881 հազար դրամ (2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 6,646,983 հազար դրամ):

Մաշվածության ծախսը վերագրվել է հետևյալ կերպ.

Հազար դրամ

	2024թ.	2023թ.
Ինքնարժեքին վերագրվող (ծնթ.17)	4,554,710	4,582,519
Վարչական ծախսեր (ծնթ. 19)	205,820	202,336
Այլ գործառնական ծախսեր (ծնթ. 20)	89,106	89,428
	4,849,636	**4,874,283**

8. Հետաձգված հարկային ակտիվներ

Հազար դրամ

	31.12.2024	31.12.2023
Տարեսկզբի մնացորդ	819,215	915,653
Շահույթում կամ վնասում ճանաչված	1,043,406	(96,438)
Տարեվերջի մնացորդ	**1,862,621**	**819,215**

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները ճանաչվել են հարկային վնասների և ժամանակավոր տարբերությունների այն չափով, որքանով Ընկերության ղեկավարությունը ակնկալում է, որ դրանք փոխհատուցելի են:
2024թ. դեկտեմբերի 31-ի ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորվում են հետևյալ կերպ.

	01.01.2024	Շահույթում կամ վնասում ճանաչված	Սեփական կապիտալում ճանաչված	31.12.2024
Հետաձգված հարկային ակտիվներ				
Ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ	2,057,580	-	-	2,057,580
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	72,862	-	-	72,862
Աշխատավարձի գծով պահուստ	10,485	(956)	-	9,528
Հարկային վնաս	-	1,178,193	-	1,178,193
	2,140,927	1,177,237	-	3,318,164
Հետաձգված հարկային պարտավորություններ				
Հիմնական միջոցներ	(1,321,712)	(133,831)	-	(1,187,881)
	(1,321,712)	(133,831)	-	(1,187,881)
Զուտ արդյունք-հետաձգված հարկային ակտիվներ	819,215	1,043,406	-	1,862,621

2024թ. դեկտեմբերի 31-ի ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորվում են հետևյալ կերպ.

	01.01.2023	Շահույթում կամ վնասում ճանաչված	Սեփական կապիտալում ճանաչված	31.12.2023
Հետաձգված հարկային ակտիվներ				
Ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ	2,057,580	-	-	2,057,580
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	72,862	-	-	72,862
Աշխատավարձի գծով պահուստ	11,889	(1,404)	-	10,485
	2,142,331	(1,404)	-	2,140,927
Հետաձգված հարկային պարտավորություններ				
Հիմնական միջոցներ	(1,226,678)	(95,034)	-	(1,321,712)
	(1,226,678)	(95,034)	-	(1,312,847)
Զուտ արդյունք-հետաձգված հարկային ակտիվներ	915,653	(96,438)	-	819,215

9. Պաշարներ

Հազար դրամ

	31.12.2024	31.12.2023
Պահեստամասեր	6,758,947	6,755,837
Նյութեր	702,580	710,208
Շինարարական նյութեր	81,262	82,449
Վառելիք	2,393	4,638
Այլ	111,753	92,409
	7,656,935	7,645,541

10. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Հազար դրամ

	31.12.2024	31.12.2023
Առևտրային դեբիտորական պարտքեր	8,500,949	6,338,617
Անհավաքելիության գծով պահուստ (գ)	(404,575)	(404,575)
Ընդամենը ամորտիզացված արժեքով չափով ֆինանսական ակտիվներ, բացառությամբ դրամական միջոցների	8,096,374	5,934,042
Տրված կանխավճարներ	2,557	2,753,388
Կասկածելի պարտքերի գծով պահուստ	(214)	(214)
Զուտ տրված կանխավճարներ	2,343	2,753,174
Դեբիտորական պարտքեր պետական բյուջեից	1,590,528	1,074,390
Այլ դեբիտորական պարտքեր	53,643	100,635
Ընդամենը	9,742,888	9,862,242

ա) Ամորտիզացված արժեքով դասակարգված առևտրային և այլ դեբիտորական պարտքերի իրական արժեքը էականորեն չի տարբերվում հաշվեկշռային արժեքից:

բ) Ընկերությունը առևտրային դեբիտորական պարտքերը ապահովված չեն գրավով կամ այլ երաշխիքներով:

գ) 31.12.2024թ.-ի դրությամբ 404,575 հազար դրամ առևտրային դեբիտորական պարտքերի (31.12.2023թ.-ի դրությամբ՝ 404,575 հազար դրամ) գծով ողջ ժամկետի համար գնահատված վճարունակության կորստի գումարը հավասար էր դեբիտորական պարտքի արժեքին: Հաշվետու ամսաթվի դրությամբ տվյալ ժամկետանց դեբիտորական պարտքերը վերաբերվում են "Արցախ էներգո" ՓԲԸ-ին: Ղեկավարության դիտարկմամբ նշված դեբիտորական պարտքի արժեզրկման հիմնական հայտանիշը այն է, որ հաճախորդը քիչ հավանական է որ կվճարի նշված պարտքերը որոշակի ժամկետի ընթացքում: Վճարման ժամկետից 30-օրվա ընթացքում դեպքում դեբիտորական պարտքերը համարվում են ժամկետանց: Նախորդ տարվա դրությամբ առկա ժամկետանց պարտքերը դեռևս չեն մարվել: Արժեզրկված դեբիտորական պարտքերի ժամկետայնությունը մեկ տարուց ավելի է:

11. Բանկային ավանդներ

Հազար դրամ

	31.12.2024	31.12.2023
Բանկային ավանդներ՝ ՀՀ դրամով	7,240,000	13,700,000
Հնարավոր կորստի պահուստ	-	(88,783)
	7,240,000	**13,611,217**

Բանկային ավանդները մինչև 12 ամիս մարման ժամկետով են և 9.75-ից 10.5 տոկոսով: Բանկային ավանդները ներդրված են ՀՀ խոշոր և ֆինանսապես կայուն բանկերում:

12. Դրամական միջոցներ

Հազար դրամ

	31.12.2024	31.12.2023
Բանկային հաշիվներ՝ ՀՀ դրամով	93,252	739,015
Բանկային հաշիվներ՝ արտարժույթով	279,117	31,899
	372,369	**770,914**

13. Սեփական կապիտալ

Բաժնետիրական կապիտալ

Հաշվետու տարում Ընկերության բաժնետոմսերի քանակը կազմել է 12,202,701 հատ (նախորդ տարում՝ 12,202,701 հատ) և մեկ բաժնետոմսի գինը 31.12.2024թ.-ի դրությամբ սահմանվել է 2,861.745 դրամ (2023թ.-ին՝ 1,035.00 դրամ):

Էմիսիոն եկամուտ

Էմիսիոն եկամուտը առաջացել է նախորդ տարիներին մեկ բաժնետոմսի գնի նվազեցումների, ինչպես նաև 2024թ. ընթացքում մեկ բաժնետոմսի գնի ավելացման արդյունքում:

Բաժնետոմսի գնի փոփոխություն տեղի է ունեցել 09.08.2018թ.-ին, մեկ բաժնետոմսի գինը սահմանվել է 815 դրամ՝ համաձայն Ընկերության բաժնետիրական կապիտալի նվազեցման վերաբերյալ ՀՀ Կառավարության թիվ 884-Ա որոշման: Մինչ այդ Ընկերության մեկ բաժնետոմսի գինը սահմանված էր 4,586 դրամ: Այնուհետև բաժնետոմսի գնի փոփոխություն տեղի է ունեցել 27.12.2023թ-ին, մեկ բաժնետոմսի գինը սահմանվել է 1,035.00 դրամ՝ համաձայն Ընկերության կանոնադրական կապիտալի ավելացման վերաբերյալ ՀՀ Կառավարության թիվ 1851-Ն որոշման: 2024թ. ընթացքում Ընկերության կանոնադրական կապիտալը հասնելով է եղել անցում համաձայն ՀՀ Կառավարության 2024 թվականի

հունվարի 4 թիվ 8-Ա, 2024 թվականի մայիսի 8-ի թիվ 668-Ն և 2024 թվականի սեպտեմբերի 5-ի 1435-Ն որոշումների: Բաժնետոմսերի գնի վերջին փոփոխությունը գրանցվել է 2024թվականի դեկտեմբերի 30-ին սահմանվելով 2,861.745 դրամ:

Պահուստային կապիտալ

Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի և Ընկերության կանոնադրության՝ Ընկերության բաշխման ենթակա շահույթը սահմանափակվում է չբաշխված շահույթի մնացորդով:

Համաձայն ՀՀ օրենսդրության՝ Ընկերությունը ստեղծել է պահուստ իր կուտակված շահույթի հաշվին, որը հավասար է 2023թ. Հաստատված բաժնետիրական կապիտալի 15%-ին:

Վերագնահատման պահուստ

Վերագնահատման պահուստը առաջացել է հիմնական միջոցների վերագնահատման արդյունքում:

14. Վարկեր

Հազար դրամ

	Ընթացիկ մաս		Ոչ ընթացիկ մաս	
	31.12.2024	**31.12.2023**	**31.12.2024**	**31.12.2023**
Վարկեր-Ամորտիզացված արժքով հաշվարկված	2,402,391	2,742,056	59,406,820	67,979,631
	2,402,391	**2,742,056**	**59,406,820**	**67,979,631**

ա) Որպես ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ դասակարգված վարկերի և փոխառությունների իրական արժեքը հաշվեկշռային արժեքից էականորեն չի տարբերվում:

բ) Ինչպես նկարագրված է ծանոթագրություն 1-ում, 2005թ.-ի մարտի 29-ին ՀՀ կառավարության և Ճապոնիայի Միջազգային Համագործակցության Գործակալություն (ՃՄՀԳ) միջև ստորագրվել է վարկային պայմանագիր «Երևանի համակցված շոգեգազային ցիկլով էլեկտրակայանի (էներգաբլոկ) նախագծի» իրականացման վերաբերյալ: Նշված համաձայնագրի հիման վրա ՃՄՀԳ-ն ՀՀ կառավարությանը տրամադրել է զարգացման պետական աջակցության (ԶՊԱ) վարկ արտոնյալ պայմաններով՝ 0.75% տարեկան տոկոսադրույքով և 40 տարի մարման (որից 10 տարին արտոնյալ) ժամկետով՝ հատկացնելով 26,409,000 միլիոն ճապոնական իեն: 2005թ. մարտին ու 2016թ. հունիսին ենթավարկային պայմանագիր է կնքվել Ընկերության և Ֆինանսների նախարարության միջև՝ նույն պայմաններով:

ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից ստացված վարկերը ապահոված են ֆինանսների նախարարության կողմից թողարկված հասարակ մուրհակներով:

Ընկերության տոկոսային և արտարժութային ռիսկերի մասին ավելի մանրամասն տեղեկատվություն ներկայացված է ծանոթագրություն 21-ում:

14.1 Վարկերի շարժը

Հազար դրամ

Վարկեր	31.12.2023թ	2024թ-ի ընթացքում				31.12.2024թ
		Տրամադրում	Տոկոսի հաշվեգրում	Փոխարժեքային տարբերություն	Մարում	
Ապահովված վարկ ֆինանսների նախարարությունից						
«Երևանի համակցված ջրագազային ցիկլով էլեկտրակայանի (էներգաբլոկի) նախագիծ (JICA, ARM-P2)»	53,279,243	-	361,070	(6,236,780)	(2,701,376)	44,702,157
«Էներգետիկայի ոլորտի ֆինանսական առողջացում» (IBRD 8615-AM)	8,615,295	-	555,229	(178,809)	(562,349)	8,429,366
«Էլեկտրահաղորդման ցանցի բարելավում» (IBRD 8495-AM)	6,805,990	-	438,624	(141,258)	(444,250)	6,659,107
«Էլեկտրահաղորդման ցանցի բարելավում» (IBRD 8495-AM) Համաֆինանսավորում	2,021,159	-	135,177	-	(137,756)	2,018,581
Ընդամենը	70,721,687	-	1,490,100	(6,556,847)	(3,845,731)	61,809,211

15. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Հազար դրամ

	31.12.2024	31.12.2023
Առևտրային կրեդիտորական պարտքեր	4,128,481	3,229,449
Վճարվելիք հարկեր և պարտավորություններ	229,661	150,003
Կրեդիտորական պարտքեր աշխատակիցներին	87,974	78,521
	4,446,116	3,457,973

16. Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ

Ընկերությունը հասույթը ներքո տարանջատել է կատեգորիաների, որի նպատակն է արտացոլելու հասույթի բնույթը, գումարը, ժամկետայնությունը և անորոշությունները:

31.12.2024թ. ավարտված տարի

Հազար դրամ

	Էլեկտրաէ-ներգիայի վաճառք (ա)	Հզորության տրամադրում (բ)	Բնական գազի վաճառք (գ)	Փոխհոսքերի գործարք՝ էլեկտրաէներգիայի վաճառք (դ)	Ընդամենը
Աշխարհագրական բաշխվածություն					
ՀՀ տարածքում	38,361,519	-	21,232,374	-	62,807,269
Արտերկրում	33,213,733	-	-	146,993	33,360,726
	71,575,252	-	21,232,374	146,993	92,954,619

Աշխարհագրական բաշխվածություն

Էլեկտրաէներգիա	71,575,252	-	-	146,993	71,722,245
Գազ	-	-	21,232,374	-	21,232,374
Հզորության տրամադրում	-	-	-	-	-
	71,575,252	-	21,232,374	146,993	92,954,619

31.12.2023թ. ավարտված տարի

Հազար դրամ

	Էլեկտրաէ-ներգիայի վաճառք (ա)	Հզորության տրամադրում (բ)	Բնական գազի վաճառք (գ)	Փոխհոսքերի գործարք՝ Էլեկտրաէներգիայի վաճառք (դ)	Ընդամենը
Աշխարհագրական բաշխվածություն					
ՀՀ տարածքում	38,357,336	14,414,344	12,441,472	-	34,043,544
Արտերկրում	24,756,283	-	-	300,699	29,309,877
	63,113,619	14,414,344	12,441,472	300,699	90,270,134
Աշխարհագրական բաշխվածություն					
Էլեկտրաէներգիա	63,113,619	-	-	300,699	63,414,318
Գազ	-	-	12,441,472	-	12,441,472
Հզորության տրամադրում	-	14,414,344	-	-	14,414,344
	63,113,619	14,414,344	12,441,472	300,699	90,270,134

ա) Էլեկտրաէներգիայի վաճառքից հասույթը ճանաչվում է ամսական հիմունքով՝ փաստացի փոխանցված էլեկտրաէներգիայի ծավալի հիման վրա:

Ընկերության կողմից իրացվող էլեկտրաէներգիայի սակագինը սահմանվում է Հայաստանի Հանրապետության Հանրային Ծառայությունների Կարգավորման Հանձնաժողովի կողմից:

Էլեկտրաէներգիայի սակագինը (առանց ԱԱՀ).

Կիրառման ամսաթիվը	դրամ/կՎտժ
01.02.2023-31.07.2023	13,578
01.08.2023-31.12.2023	6,420
01.02.2024-31.07.2024	18,356
01.08.2024-31.12.2024	3,928

բ) Հզորության տրամադրումից հասույթը ստացվում է կայանի պարապուրդի ժամանակ և ճանաչվում է ամսական հիմքով՝ պարապուրդի ժամերի հիման վրա:

Հզորության տրամադրման սակագինը (առանց ԱԱՀ).

Կիրառման ամսաթիվը	դրամ/կՎտժ.ամիս
01.02.2023	258.95
01.02.2024	279.21

Համաձայն ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2024թ. հոկտեմբերի 9-ի №334-Ն որոշման հզորության տրամադրումից հասույթը փոխարինվել է երկրորդային և երրորդային պահուստի ապահովման ծառայության վճարով: Հաշվի առնելով, որ նշված ծառայության մատուցումը չի հանդիսանում Ընկերության հիմնական գործունեություն, Ընկերության կողմից նշված ծառայության

մատուցումից եկամուտը, ինչպես նաև դրա գծով կատարվող ծախսը 2024թ.-ից սկսած վերադասակարվել է որպես գործառնական գործունեության տարր հաջորդ տարիների հետհամադրելիության ապահովման նպատակով:

գ) Բնական գազի վաճառքից հասույթը ճանաչվում է ամսական հիմունքով՝ փաստացի փոխանցված ծավալի հիման վրա:

Համաձայն պայմանագրի Երևան ՋԷԿ-ը ձեռք է բերում գազ, որի դիմաց մատակարարին տրամադրում է էլեկտրաէներգիա՝ կիրառելով համապատասխան գործակից:

Միևնույն ժամանակ, Ընկերությունը գազի մի մասը նույն կետում հանձնում է Երրորդ կազմակերպության, մնացած մասը օգտագործվում է էլեկտրաէներգիայի արտադրության համար: Երրորդ կողմը ստացված գազի դիմաց՝ Ընկերությանը նույն կետում տրամադրում է էլեկրաէներգիա՝ պայմանագրով սահմանված մեկ այլ գործակցով, որն Ընկերությունը իր հերթին ամբողջությամբ փոխանցվում է գազի մատակարարին:

Ընկերության ղեկավարությունը կատարել է հիմնավորված դատողություններ, որոշելու համար՝ արդյո՞ք տվյալ հանգամանքում Ընկերությունը ՖՀՍՄ-ների պահանջների առումով հանդիսանում է Պրինցիպալ թե Գործակալ:

Հաշվի առնելով, որ Ընկերությունը հանդիսանում է հիմնական պատասխանատու պայմանագրի կատարման, պայմանագրի հարցերի լուծման և մատակարարված ապրանքի որակի ու համապատասխանության համար, Ընկերության ղեկավարությունը համարել է, որ Ընկերությունը տվյալ գործարքների շրջանակում հանդիսանում է Պրինցիպալ կողմ, ուստի հասույթը ճանաչել է համախառն հիմունքով:

դ) Փոխհոսքերի գործարք՝ էլեկտրաէներգիայի վաճառք

Պայմանագրի համաձայն Երևան ՋԷԿ-ը էլեկտրաէներգիա է մատակարարում Պայմանագրի կողմ հանդիսացող ընկերությանը: Էլեկտրաէներգիայի մատակարարումը իրականացվում է որոշակի ժամանակահատվածում, ինչը պայմանավորված է եղանակային պայմանների հետ:

Պայմանագրի կողմ հանդիսացող Ընկերությունը, համաձայնեցված կարգով և չափով, Երևան ՋԷԿ-ին փոխհատուցում է համապատասխան էլեկտրաէներգիայի քանակությունը:

17. Վաճառքի ինքնարժեք

Հազար դրամ

	31.12.2024	31.12.2023
Վաճառված էլեկտրաէներգիայի ինքնարժեք	35,953,369	29,051,798
Նյութեր	19,748,360	21,285,321
Հզորության ձեռքբերման ծախսեր	-	14,100,800
Վաճառված գազի ինքնարժեք	17,297,439	10,526,386
Էներգիայի և գազի տեղափոխման ծառայություններ	6,635,833	5,276,066
Մաշվածության և ամորտիզացիոն ծախսեր	4,554,710	4,582,519
Հատուցումներ աշխատակիցներին	493,343	527,943
	84,683,054	85,350,833

18. Այլ եկամուտներ

Հազար դրամ

	31.12.2024	31.12.2023
Հզորության տրամադրումից եկամուտ	109,907	109,354
Երկրորդային և երրորդային պահուստի ապահովման ծառայության մատուցումից հասույթ	3,213,377	-

Եկամուտներ տույժերից, տուգանքներից	24,109	6,893
Նյութական վնասի փոխհատուցումից եկամուտներ	18,988	348
Գործառնական այլ եկամուտներ արտարժույթի փոխարկում	315	513,951
Սուբսիդավորումից եկամուտներ	9,503	15,262
Այլ	129,330	15,536
	3,505,529	**661,344**

19. Վարչական ծախսեր

Հազար դրամ

	31.12.2024	31.12.2023
Փոխհատուցում աշխատակիցներին	419,875	382,598
Մաշվածություն և ամորտիզացիա	210,358	204,051
Չփոխհատուցվող հարկեր և պարտավորություններ	160,325	106,924
Հեռահաղորդակցության ծախսեր	4,894	5,104
Աուդիտի և խորհրդատվության ծախսեր	31,657	30,189
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	10,619	12,713
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր	8,628	4,202
Բանկային ծախսեր	2,959	1,067
Այլ	18,782	9,723
	868,097	**756,571**

20. Այլ ծախսեր

Հազար դրամ

	31.12.2024	31.12.2023
Մաշվածություն	89,106	89,428
Պահակային ծառայության գծով ծախսեր	130,197	130,355
Ակտիվների փչացումից ծախսեր	-	145,222
Արտարժույթի փոխանակումից ծախսեր	22,809	17,717
Երկրորդային և երրորդային պահուստի ապահովման ծառայության գծով ծախսեր	15,759,425	-
Այլ	94,130	265,843
	16,095,667	**648,565**

21. Ֆինանսական եկամուտ և ծախս

Հազար դրամ

	31.12.2024	31.12.2023
Ֆինանսական եկամուտ		
Բանկային ավանդներից եկամուտ	875,606	1,450,599
	875,606	**1,450,599**
Ֆինանսական ծախս		
Վարկերի գծով տոկոսային ծախս	(1,490,100)	(1,622,083)
	(1,490,100)	**(1,622,083)**
	(614,494)	**(171,486)**

22. Այլ ֆինանսական հոդվածներ

Հազար դրամ

	31.12.2024	31.12.2023
Փոխարժեքային տարբերությունից օգուտ/(կորուստ), զուտ		
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի գծով	(3,329)	24,069
Վարկերի գծով	6,556,847	2,111,188
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի գծով	107,696	(175,164)
Դրամական միջոցների գծով	370	2,235
	6,661,584	1,962,328

23. Շահութահարկի գծով ծախս

Հազար դրամ

	31.12.2024	31.12.2023
Ընթացիկ հարկ	-	697,581
Հետաձգված հարկ	(1,043,406)	96,438
	(1,043,406)	794,019

Շահութահարկի արդյունավետ տոկոսադրույքի համադրում

Հազար դրամ	2024		2023	
Շահույթ/(վնաս) մինչև հարկումը	860,420		5,966,353	
Շահութահարկ սահմանված դրույքաչափով	154,876	18%	1,073,944	18%
Այլ չնվազեցվող ծախսերի/(չհարկվող եկամուտների) հարկային հետևանքը, զուտ	(1,198,282)		(279,925)	
Շահութահարկի գծով ծախսը/(փոխհատուցումը) և արդյունավետ տոկոսադրույքը	(1,043,406)		794,019	13%

24. Կապակցված կողմեր

Ընկերության 100% բաժնետոմսերը պատկանում են Հայաստանի Հանրապետության կառավարությանը, հետևաբար Ընկերության կապակցված կողմեր են համարվում բոլոր պետական ձեռնարկությունները: Ընկերության կապակցված կողմը հանդիսանում է Ընկերության ղեկավարը:

24.1. Վերահսկողություն

Ընկերությունը վերահսկվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից, ի դեմս ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության:

24.2. Գործարքներ կապակցված կողմերի հետ

Հաշվետու տարվա ընթացքում Ընկերության կապակցված կողմերի միջև իրականացրել են հետևյալ գործարքները և հաշվետու ամսաթվի դրությամբ մնացորդները հետևյալն են.

Հազար դրամ

	2024	2023
Բաժնետերեր		
Տոկոսային ծախսի հաշվեգրում	1,490,100	1,462,320
Հաշվեգրված տոկոսների մարում	1,516,540	1,434,439
Փոխառության մայր գումարի մարում	2,329,190	2,424,833
Ընդհանուր վերահսկողության տակ գտնվող ընկերություններ		
Ծառայությունների ձեռք բերում	3,666,186	7,157,973
Ապրանքների իրացում	2,983,598	6,378,053
Ապրանքների ձեռք բերում	3,745,727	86,965

Հազար դրամ

	31.12.2024	31.12.2023
Վարկեր և փոխառություններ ֆինանսների նախարարությունից	61,809,211	70,721,687
Առևտրային Դեբիտորական պարտքեր	141,515	148,974
Առևտրային Կրեդիտորական պարտքեր	391,361	203,379

24.3. Առանցքային կառավարչական անձնակազմի հատուցումներ

Հազար դրամ

	31.12.2024	31.12.2023
Աշխատավարձ և այլ կարճաժամկետ փոխհատուցումներ	22,984	29,475
	22,984	29,475

25. Ֆինանսական ռիսկերի կառավարում

Իր գործունեության արդյունքում Ընկերությունը կարող է ենթարկվել հետևյալ ֆինանսական ռիսկերին՝

- Պարտքային ռիսկ
- Իրական արժեքի կամ դրամական միջոցների հոսքերի տոկոսադրույքային ռիսկ
- Արտարժութային ռիսկ
- Այլ գնային ռիսկ
- Իրացվելիության ռիսկ

Ընկերությունը կարող է ենթարկվել իր կողմից ֆինանսական գործիքների օգտագործումից առաջացող ռիսկերի, ինչպես բնորոշ է մյուս բոլոր ձեռնարկատիրական գործունեություններին: Սույն ծանոթագրությունում ներկայացված են Ընկերության նպատակները, քաղաքականությունը, ռիսկերի կառավարման գործընթացները և դրանց չափման մեթոդները: Սույն ֆինանսական հաշվետվություններում ներկայացված է քանակական տեղեկատվություն վերոնշյալ ռիսկերի վերաբերյալ:

Ֆինանսական գործիքներից առաջացող ռիսկերի, Ընկերության նպատակների, քաղաքականության, ռիսկերի կառավարման գործընթացների և դրանց չափման մեթոդների հետ կապված նախորդ ժամանակաշրջանների համեմատ էական փոփոխություններ չեն գրանցվել:

Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Հազար դրամ

	2024	2023
Ֆինանսական ակտիվներ		
Առևտրային դեբիտորական պարտքեր	8,149,708	5,934,042
Դրամական միջոցներ բանկերում	372,369	770,913
Բանկային ավանդներ	7,240,000	13,611,217
Ընդամենը	**15,762,077**	**20,316,172**
Ֆինանսական պարտավորություններ		
Վարկեր և փոխառություններ	61,809,211	70,721,687
Առևտրային կրեդիտորական պարտքեր	4,128,481	3,229,449
Ընդամենը	**65,937,822**	**73,951,136**

25.1. Շուկայական ռիսկ

25.1.1. Գնային ռիսկ

Գնային ռիսկը այն ռիսկն է, երբ ֆինանսական գործիքի իրական արժեքը կամ ապագա դրամական հոսքերը տատանվում են շուկայական գների փոփոխության արդյունքում (բացի տոկոսադրույքային և արժութային ռիսկերից առաջացողներից): Ղեկավարությունը գնահատում է, որ հաշվետու ամսաթվի դրությամբ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը էականորեն չի տարբերվում նրանց ընթացիկ արժեքից:

25.2. Արժութային ռիսկ

Արժութային ռիսկը այն ռիսկն է, երբ ֆինանսական գործիքի իրական արժեքը կամ ապագա դրամական հոսքերը տատանվում են արտարժույթի փոխարժեքների փոփոխությունների հետևանքով:

Ընկերության գործարքների հիմնական մասը իրականացվում է հայկական դրամով: Արտարժույթի փոխարժեքային տատանումներից կախվածությունն մեծամասամբ առաջանում է Ընկերության ստացված վարկերից և փոխառություններից, որոնք, ի սկզբանե արտահայտված են ճապոնական իենով, ԱՄՆ դոլարով և եվրոյով:

Ստորև ներկայացված է արտարժույթի ռիսկին Ընկերության ենթարկվածությունը:

Հազար դրամ	31.12.2024				31.12.2023		
	USD	EUR	GBP	JPY	USD	EUR	JPY
Ֆինանսական ակտիվներ							
-Դեբիտորական պարտքեր	3,221,382	-	-	-	654,925	-	-
-Դրամական միջոցներ	-	279,117	-	-	22	31,604	-
Ընդամենը	**3,221,382**	**279,117**	**-**	**-**	**654,947**	**31,604**	**-**
Ֆինանսական պարտավորություններ							
-Վարկեր	15,088,473	-	-	44,702,157	15,421,285	-	53,279,243
-Կրեդիտորական պարտքեր	2,657	314,987	12,102	-	-	-	
Ընդամենը	15,091,130	314,987	12,102	44,702,157	15,421,285	0	53,279,243
Զուտ արդյունք	(11,869,748)	(35,870)	(12,102)	(44,702,157)	(14,766,338)	31,604	(53,279,243)

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է Ընկերության զգայունությունը՝ նշված արտարժույթների նկատմամբ նկատմամբ դրամի 10% (2023թ.՝ 10%) աճին/նվազմանը: 10%-ը (2023թ.՝ 10%) ղեկավարության կողմից գնահատված փոխարժեքի հավանական փոփոխությունն է: Զգայունության վերլուծությունը

ժամանակաշրջանի վերջում ճշգրտում է դրանց փոխարկումը՝ փոփոխելով փոխարժեքը 10%-ով (2023թ.՝ 10%):

Հազար դրամ	ԱՄՆ դոլարի ազդեցություն		Եվրոյի ազդեցություն		Իենի ազդեցություն		Անգլիական ֆունտի ազդեցություն	
	2024թ.	2023թ.	2024թ.	2023թ.	2024թ.	2023թ.	2024թ.	2023թ.
Շահույթ կամ վնաս	(1,186,874)	(1,476,634)	(3,587)	3,160	(4,470,215)	(5,327,924)	(1,210)	-

25.3. Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը այն ռիսկն է, երբ Ընկերությունը դժվարություններ է ունենում այն ֆինանսական պարտավորությունների հետ կապված իր պարտականությունները կատարելիս, որոնք մարվելու են՝ դրամական միջոց կամ այլ ֆինանսական ակտիվներ տրամադրելով:

Ընկերության ղեկավարությունը շարունակական մոնիտորինգ է իրականացնում Ընկերության իրացվելիության գծով՝ ապահովելու համար գործառնական գործունեության համար անհրաժեշտ դրամական միջոցների առկայությունը:

Ընկերությունը չունի ածանցյալ ֆինանսական պարտավորություններ: Հետևյալ աղյուսակը վերլուծում է Ընկերության ոչ-ածանցյալ ֆինանսական պարտավորությունները, որոնք խմբավորվել են ըստ մարման ժամկետայնության՝ հաշվետվության օրվանից հետո:

2024թ.	Մինչև 6 ամիս	6 ամսից 1 մինչև տարի	1-5 տարի	Ավելի քան 5 տարի	Ընդամենը
Վարկեր	1,314,397	1,087,994	8,703,951	50,702,869	61,809,211
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	4,128,480	-	-	-	4,128,480
	5,442,877	**1,087,994**	**8,703,951**	**50,702,869**	**65,937,691**

2023թ.	Մինչև 6 ամիս	6 ամսից 1 մինչև տարի	1-5 տարի	Ավելի քան 5 տարի	Ընդամենը
Բանկային վարկեր	1,505,621	1,236,435	9,891,483	58,088,148	70,721,687
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	3,399,725	-	-	-	3,399,725
	4,905,346	**1,236,435**	**9,891,483**	**58,088,148**	**74,121,412**

25.4. Պարտքային ռիսկը

Պարտքային ռիսկը այն ռիսկն է, երբ գործընկերների կողմից Ընկերության նկատմամբ իրենց պարտավորությունների չկատարելու արդյունքում Ընկերությունը կարող է կրել ֆինանսական կորուստներ: Այս ռիսկի ազդեցությունը Ընկերության համար առաջանում է տարբեր ֆինանսական գործիքներից, ինչպիսիք են դեբիտորական պարտքերը, տրամադրված փոխառությունները, ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջները և այլն: Պարտքային ռիսկի առավելագույն ազդեցությունը ներկայացված է հետևյալ ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքներով:

Հազար դրամ

	31.12.2024	31.12.2023
Առևտրային դեբիտորական պարտքեր	8,149,708	5,934,042
Դրամական միջոցներ բանկերում	372,369	770,913
Բանկային ավանդներ	7,240,000	13,611,217
Ընդամենը	**15,762,077**	**20,316,172**

Առևտրային դեբիտորական պարտքերի գծով ժամկետայնության և անհավաքելիության ռիսկի վերաբերյալ տեղեկությունը ներկայացված է ծնթ. 10 –ում:

Դրամական միջոցների և դրանց համարժեքների մասով պարտքային ռիսկն ընդունելի է, քանի որ պայմանագրային գործընկերները հեղինակավոր բանկեր են:

26. Պայմանական դեպքեր

ա) Ապահովագրություն

Հայաստանի Հանրապետությունում ապահովագրական համակարգը գտնվում է զարգացման փուլում, որի հետևանքով ապահովագրության շատ տեսակներ դեռևս չունեն լայն կիրառում: Քանի դեռ Ընկերության գույքը և գործունեությունը համապատասխան ձևով ապահովագրված չեն, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ ազդեցություն ունենալ վերջինիս գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

բ) Դատական գործեր

Պետական մարմինների և տնտեսավարող սուբյեկտների կողմից ընդդեմ Ընկերության չեն ներկայացվել այնպիսի հայցադիմումներ, որոնք կարող են էական սպառնալիք հանդիսանալ վերջինիս նորմալ գործունեության համար:

գ) Հարկային օրենսդրության հակասություններ և երկիմաստություններ

Հայաստանի Հանրապետությունում նոր ձևավորված հարկային համակարգին բնորոշ է հաճախակի փոփոխվող օրենսդրությունը, որը հաճախ հստակ չէ և մեկնաբանությունների տեղիք է տալիս: Հարկերը ենթակա են ուսումնասիրության համապատասխան իրավասու մարմինների կողմից, որոնց օրենքով վերապահված է իրավունք կիրառելու պատժամիջոցներ (տուգանքներ, տույժեր) տնտեսավարող սուբյեկտների և նրանց պաշտոնատար անձանց նկատմամբ՝ նրանց կողմից օրենսդրությունը խախտելու համար: Այս պայմաններում գոյություն ունի ռիսկ, որ իրավասու մարմինների կողմից իրականացված ստուգումների արդյունքում կարող են առաջանալ լրացուցիչ հարկային պարտավորություններ:

Թեև Ընկերության ղեկավարությունը համոզված է, որ հնարավոր լրացուցիչ հարկային պարտավորությունները չեն կարող էական լինել և դրանց գծով պահուստի ձևավորման անհրաժեշտությունը բացակայում է: Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինների մեկնաբանությունները կարող են տարբեր լինել՝ դրանցից բխող էական ազդեցություններով:

դ) Պայմանական պարտավորություններ

Ընկերությունը չունի այլ անձանց տրամադրած երաշխավորություններ, երաշխիքներ և այլ պայմանական պարտավորություններ:

ե) Շրջակա միջավայրի հետ կապված խնդիրներ

Ղեկավարության համոզմամբ՝ Ընկերությունը բավարարում է շրջակա միջավայրի հետ կապված Կառավարության պահանջները և վստահ է, որ Ընկերությունը շրջակա միջավայրի հետ կապված ընթացիկ էական պարտավորություններ չունի:

Այնուամենայնիվ, Հայաստանում շրջակա միջավայրի վերաբերյալ օրենսդրությունը զարգացման փուլում է, և դրա հավանական փոփոխություններն ու օրենսդրության մեկնաբանությունները ապագայում կարող են էական պարտավորություններ առաջացնել:

27. Կապիտալի կառավարում

Ընկերությունը իր կապիտալը կառավարում է՝ ապահովելու համար Ընկերության շարունակական գործունեությունը և մասնակիցների շահույթը:

Ընկերության կապիտալի կառուցվածքը ներառում է փոխառու միջոցները (ընթացիկ և ոչ ընթացիկ պարտավորություններ) և սեփական կապիտալը (ներառող կանոնադրական կապիտալը, պահուստները և կուտակված շահույթը):

Ընկերության՝ որպես կապիտալ կառավարվող գումարները հաշվետու տարվա համար ամփոփված են ստորև.

Հազար դրամ

	31.12.2024	31.12.2023
Վարկեր	61,809,211	70,721,687
Հանած		
Դրամական միջոցներ դրամարկղում և բանկերում	(372,369)	(770,913)
Բանկային ավանդներ	(7,240,000)	(13,611,217)
Զուտ պարտք	**54,196,842**	**56,339,557**
Ընդհանուր բաժնետիրական կապիտալ	34,921,019	12,629,796
Կապիտալ/Պարտք գործակից	**65,937,822**	**73,951,136**
	64.43%	**22.42%**

28. Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր

2022թ. փետրվարից Հայաստանի էլեկտրաէներգետիկական շուկան ամբողջովին կարգավորվող կառուցվածքից աստիճանաբար անցում է կատարում շուկայի ազատականացված կառուցվածքի՝ աստիճանաբար ներդնելով մրցակցային շուկայի բաղադրիչներ:

Այս փոփոխությունները նպատակ ունեն ապահովել նոր մասնակիցների մուտքը էլեկտրաէներգետիկական շուկա և հնարավորություն ընձեռնել սպառողներին էլեկտրական էներգիայի մատակարարի ընտրության հարցում, ինչպես նաև կնպաստեն այլ երկրների հետ էլեկտրական էներգիայի առևտրի խթանմանը:

Հայաստանի էլեկտրաէներգետիկական շուկայի ազատականացման և միջպետական առևտրի խթանման ուղղությամբ իրականացված աշխատանքների շրջանակներում 2022 թվականի փետրվարի 1-ից մեկնարկել է Հայաստանի էլեկտրաէներգետիկական շուկայի փուլային ազատականցումը և նախատեսվում է մինչև 2030 թվականի փետրվարի 1-ը ամբողջությամբ ազատականացնել:

Արդյունքում՝ էլեկտրաէներգիա արտադրող որոշ կայաններ, այդ թվում նաև «Երևան ՋերմաԷլեկտրակենտրոն» ՓԲԸ-ն չեն ունենա ՀԾԿՀ-ի կողմից ձևավորված սակագին, և կսկսեն վաճառել իրենց էլեկտրաէներգիան շուկայում առկա պահանջարկի և առաջարկի արդյունքում ձևավորված գնով: Նրանք կդառնան մեծածախ շուկայի մասնակիցներ, որի արդյունքում սուբյեկտները էլեկտրաէներգիան ձեռք կբերեն շուկայական պայմաններում:

29. Իրական արժեքի չափման բացահայտումներ

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է այն ակտիվները և պարտավորությունները, որոնց իրական արժեքները բացահայտվել են ծանոթագրություններում.

Հոդված	Իրական արժեք հազ. դրամ	Գնահատման մեթոդ	Իրական արժեքի հիերարխիայի մակարդակ	Նշանակալի ոչ դիտարկելի ելակետային տվյալներ
Վարկեր և փոխառություններ	61,809,211	Ընթացիկ Փոխառությունների հաշվեկշռային արժեքը մոտ է իրական արժեքին	Մակարդակ 3	Կիրառելի չէ
Առևտրային դեբիտորական պարտքեր	8,149,708	Ընթացիկ Կարճաժամկետ (12 ամսից պակաս) դեբիտորական պարտքերի հաշվեկշռային արժեքը մոտ է իրական արժեքին	Մակարդակ 3	Կիրառելի չէ
Առևտրային կրեդիտորական պարտքեր	4,128,481	Ընթացիկ Կարճաժամկետ (12 ամսից պակաս) կրեդիտորական պարտքերի հաշվեկշռային արժեքը մոտ է իրական արժեքին	Մակարդակ 3	Կիրառելի չէ